THE WORLD BANK
IBRD • IDA | WORLD BANK GROUP

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՋՐԻ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ

## ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՄՆ ՇՐՋԱՆԱԿ

# ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿ (ՏՔՇ)

(Պարզեցված ցածր կամ միջին ռիսկով ծրագրերի համար)

## ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՋՐԻ և ՈՌՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ (ՋՈԾԲ – P508124)

*Համար*

*Պատրաստված*

**ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության**

**ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ**

*կողմից*

Նախագիծ (մարտ 2025)

Բովանդակություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 7
1.1 Ծրագրի նպատակները և նկարագրությունը ..... 7
1.2 Նպատակը և հիմնավորումը ..... 9
1.3 Ծավալը և մոտեցումը ..... 10
1.4 Հիմնական սկզբունքներ ..... 13
2. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ՇՐՋԱՆԱԿ ..... 16
2.1 Ազգային օրենսդրության և Համաշխարհային բանկի ԲՍՍ5-ի համեմատությունը 16
2.2 Բացահայտված բացերն ու առաջարկվող մոտեցումները ..... 20
3. ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՊԼԱՆ ..... 22
3.1 Հողի օտարման սցենարներ ..... 22
3.2 ՏՇ-ների նախապատրաստում ..... 24
3.2.1 Ենթածրագրի նույնականացում և զննություն ..... 24
3.2.2 Ծավալի որոշում և ելակետայինուսումնասիրություններ ..... 24
3.2.3 Շահակիրների ներգրավում և խորհրդատվություն ..... 25
3.2.4 Տարաբնակեցման պլանների մշակում ..... 26
3.2.5 Հաստատում և հանրայնացում ..... 26
3.3 Կասեցման օր ..... 26
3.4 ՏՊ-ների իրականացում ..... 27
3.5 Հանրայնացում և խորհրդատվություններ ..... 28
3.6 Մշտադիտարկում և գնահատում ..... 29
4. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ ..... 31
4.1 Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն ..... 31
4.2 Ֆինանսների նախարարություն ..... 31
4.3 Կադաստրի կոմիտե ..... 31
4.4 Մարզային և տեղական ինքնակառավարման մարմիններ ..... 32
5. ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ և ԲՈՂՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ ..... 36
5.1 Նպատակը ..... 36
5.2 Քայլեր ..... 37
5.3 Դիմում ..... 38
5.4 Բողոքների փակում ..... 38
5.5 Բողոքի արձանագրում և փաստաթղթավորում ..... 38
5.6 ՀԿԲԼՄ առանցքային անձի կոնտակտային տվյալները ..... 39

6. ԱՐԺԵՔ ԵՒ ԲՅՈՒՋԵ ..... 40
Հավելված 1: ՏՊ իրավունքների մատրից ..... 41
Հավելված 2: ՏՊ բովանդակությունը ..... 46
Հավելված 3. Բողոքների լուծման հանձնաժողով. առաջադրանքներ և կազմ ..... 48
Հավելված 4. Հանրային քննարկման արձանագրություն ..... 49

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

| | |
|---|---|
| ԱԱԱ | Աշխատանքի անվտանգություն և առողջություն |
| ԱևԱ | Առողջություն և անվտանգություն |
| ԱԱՏՄ | Առողջության և աշխատանքի տեսչական մարմին |
| ԱԲԼՄ | Արձագանքների և բողոքների լուծման մեխանիզմ |
| ԱԿԸ | Աշխատանքի կառավարման ընթացակարգեր |
| ԱՄԿ | Աշխատանքի միջազգային կազմակերպություն |
| ԲԱԱՈՒ | Բնապահպանական, առողջության և անվտանգության ուղեցույցներ |
| ԲԶՄ | Բազմափուլային զարգացման մոտեցում |
| ԲԼԿ | Բողոքների լուծման կոմիտե |
| ԲՍԿՇ | Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակ |
| ԲՍԿՊ | Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան |
| ԲՍՇ | Բնապահպանական և սոցիալական շրջանակ |
| ԲՍՊԱԳ | Բնապահպանական և սոցիալական պատահարների արձագանքման գործիքակազմ |
| ԲՍՍ | Բնապահպանական և սոցիալական ստանդարտներ |
| ԳՋՋԾ | Գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ |
| ԷՆ | Էկոնոմիկայի նախարարություն |
| ԻԳ | Իրականացնող գործակալություն |
| ԾԼՄ | Ծրագրի լիազոր մարմին |
| ԾԻԹ | Ծրագրի համակարգման թիմ |
| ԿՊՊ | Կատարողականով պայմանավորված պայմաններ |
| ՀԲ | Համաշխարհային բանկ |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՄՊ | Մշտադիտարկման պլան |
| ՄՌ | Մարդկային ռեսուրսներ |
| ՄՖՀ | Միջազգային ֆինանսական հաստատություն |
| ՄևԳ | Մշտադիտարկում և գնահատում |
| ՆԾՖ-ԿՊՊ | Ներդրումային ծրագրի ֆինանսավորում՝ կատարողականով պայմանավորված պայմաններով |
| Շ-ԲՍԿՊ | Շինարարության բնապահպանական և սոցիալական կառավարման պլան |
| ՇՄՍԱԳ | Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատում |

| | |
|---|---|
| ՇՆՇ | Շահակիրների ներգրավման շրջանակ |
| ՇՆՊ | Շահակիրների ներգրավման պլան |
| ՇԵՊ | Շահագործում և պահպանում |
| ՈԾՎ | Ոռոգման ծառայության վճար |
| ՊՈԱԿ | Պետական ոչ առևտրային կազմակերպություն |
| ՋԿ | Ջրային կոմիտե |
| ՋՕԸ | Ջրօգտագործողների ընկերություն |
| ՍՇԲ/ՍՈ | Սեռական շահագործում և բռնություն/սեռական ոտնձգություն |
| ՎԶՄԲ | Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ |
| ՏԿԵՆ | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն |
| ՏԿՀ | Տեղեկատվություն, կրթություն և հաղորդակցություն |
| ՏՇ | Տարաբնակեցմանբ շրջանակ |
| ՏՊ | Տարաբնակեցմանբ պլան |
| ՏՔՇ | Տարաբնակեցմանբ քաղաքականության շրջանակ |
| ՖԿ | Ֆինանսական կառավարում |

# 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն Տարաբնակեցման շրջանակային (ՏՇ) փաստաթղթի նպատակն է Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան մարմինների և Համաշխարհային բանկի (ՀԲ) միջև համաձայնության պայմաններ սահմանել այն սկզբունքների և ընթացակարգերի վերաբերյալ, որոնք պետք է կիրառվեն տարաբնակեցման պլանի (ՏՊ) կամ տարաբնակեցման պլանների[1] հետագա պատրաստման ժամանակ այն ենթածագրերի համար, որոնց շրջանակներում ակնկալվում է ֆիզիկական կամ տնտեսական տարհանում, հողի ձեռքբերման կամ բնական ռեսուրսների հասանելիության կամ օգտագործման սահմանափակումներ: Նախքան Ծրագրի ղեկավարության կողմից մրցույթ հայտարարելը ցանկացած ենթածրագրի համար, որի շրջանակներում նման ազդեցությունների են ակնկալվում, պահանջվում է ՏՊ-ի (կամ ՏՊ-ների) հաստատում ՀԲ-ի կողմից:

ՏՇ-ի նպատակն է խուսափել կամ նվազագույնի հասցնել ֆիզիկական կամ տնտեսական տեղաշարժի հետ կապված ցանկացած անբարենպաստ ազդեցություն և ապահովել միջոցառումներ՝ մեղմելու ցանկացած հնարավոր անբարենպաստ ազդեցություն: Հայաստանի կառավարությունը սույնով համաձայնում է կիրառել ՀԲ-ի Բնապահպանական և սոցիալական շրջանակի (ԲՍՇ) Բնապահպանական և սոցիալական ստանդարտ 5-ում (ԲՍՍ5) ներառված սկզբունքներն, ընթացակարգերը և չափորոշիչները, եթե ծրագրի օգտագործման համար որևէ տեղամասի ձեռքբերումը կառաջացնի տնտեսական[2] կամ ֆիզիկական տարհանում[3]:

Սույն ՏՇ-ն կկիրառի Հայաստանի գործող իրավական և քաղաքականության շրջանակը՝ ներառելով լրացուցիչ միջոցներ, որոնք անհրաժեշտ են ԲՍՍ5-ի սկզբունքներին և չափանիշներին համապատասխանության հասնելու համար[4]:

Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման (ՋՈԾԲ) ծրագիրը պատրաստվում է բարելավելու ոռոգման և գյուղական վայրերի ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների կլիմայակայուն հասանելիությունն, արդյունավետությունը և ֆինանսական կայունությունը Ծրագրում ընդգրկված տարածքներում: Պատրաստվել է Շահակիրների ներրգրավման պլան (ՇՆՊ) որպես համապատասխան շահակիրների ներգրավման աշխատանքների ուղեցույց թե՛ Ծրագրի նախապատրաստման և թե՛ իրականացման ընթացքում:

## 1.1 Ծրագրի նպատակները և նկարագրությունը

Ծրագրի զարգացման նպատակն (ԾԶՆ) է ապահովել բարելավված հասանելիություն դեպի արդյունավետ և ֆինանսապես կայուն ոռոգման և գյուղական ՋՋ ծառայությունները Հայաստանի ընտրված տարածքներում: Ծրագիրը հանդիսանում է 10-ամյա Բազմափուլային զարգացման մոտեցման (ԲԶՄ) մի մաս, որի նպատակն է բարելավել ոռոգման և գյուղական ՋՋ ծառայությունների մատուցումը Հայաստանում: Փուլ 1-ը նախագծված է կլիմայակայուն ոռոգման և ՋՋ ծառայությունների բարելավման համար: Այն վեց Ջրօգտագործող ընկերակցություններին

[1] Ապահովելու, որ համապատասխան մարմինը տեղյակ է իր պարտավորությունների մասին, խորհուրդ է տրվում, որ ՏՇ-ն ներկայացվի ուղեկցող գրությամբ՝ ստորագրված իրականացնող գործակալության (կամ նմանատիպ համապատասխան մարմնի) գլխավոր գործադիր տնօրենի կողմից:

[2] Ինչպես նկարագրված է ԲՍՍ5, 33–36 պարբերությունում

[3] Ինչպես նկարագրված է ԲՍՍ5, 33–36 պարբերությունում

[4] ՏՔՇ-ն չի փոխարինում ԲՍՍ5-ի կամ ԲՍՇ-ի դրույթները, և Համաշխարհային բանկը մնում է բացառապես պատասխանատու որոշելու, թե ինչ է պահանջվում ծրագրի իրականացման ընթացքում այդ պահանջներին համապատասխանությունը ապահովելու համար:

(ՋՕԸ) կապահովի ժամանակակից ոռոգման համակարգերով և կբարելավի ոռոգման ծառայության արդյունավետությունը՝ ընտրված սխեմաներում առաջնային, երկրորդային և երրորդային ցանցերի արդիականացման միջոցով՝ խթանելու կլիմայական դիմացկունությունը երաշտի, ջրհեղեղների և ծայրահեղ շոգի նկատմամբ: Փուլ 1-ը նաև կբարելավի հասանելիությունը դեպի կայուն ՋՋ ծառայությունները՝ մշակելով գյուղական ՋՋ ներդրումային պլաններ և արդիականացնելով ջրամատակարարման ենթակառուցվածքները: Նաև կմշակվեն տեխնիկատնտեսական հիմնավորումներ, նախագծեր և մրցութային փաստաթղթեր Փուլ 2-ի ներդրումների համար: Ավելին, Փուլ 1-ը կներառի նաև Կատարողականով պայմանավորված պայմաններ (ԿՊՊ)՝ աջակցելու քաղաքականության, իրավական և ինստիտուցիոնալ բարեփոխումներին, ինչպես նաև ուսումնական ծրագիր, որը փաստաթղթավորում է պատկերացումները՝ հետազոտությունների, տվյալների վերլուծության և քաղաքականության մշակման միջոցով իրականացման գործընթացը ուղղորդելու համար: Ծրագրի Փուլ 1-ի իրականացման ժամանակահատվածը կտևի վեց տարի:

Փուլ 1-ը բաղկացած է չորս բաղադրիչից, այդ թվում՝ մեկ բաղադրիչ ԿՀՊ-ներով: Այդ բաղադրիչները հետևյալն են.

**ա. Բաղադրիչ 1՝ Ջրային ոլորտի բարեփոխում և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում,** աջակցում է ՏԿԵՆ-ին և Ջրային Կոմիտեին (ՋԿ) առանցքային առաջնահերթ ոլորտներում, ներառյալ ջրի, ոռոգման և գյուղական խմելու ջրի և ջրահեռացման համար ազգային ռազմավարությունների մշակումը; ոռոգման ջրի սակագների վերանայումը՝ հիմնված հողօգտագործման և ջրի սպառման վրա; արդիականացված ոռոգման սխեմաների համար Ակտիվների սպասարկման միջոցների և պլանի մշակումը; Գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման (ԳՋՋ) ստորաբաժանումների ստեղծումը՝ սահմանված համաձայնագրերով, կատարողականի ցուցանիշներով և մոնիտորինգի համակարգերով; և Ոռոգման ջրի հաշվառման և հարմարվողականության ազգային կենտրոնի (ՈՋՀՀԱԿ) (ԿՀՊ-ներով) գործարկումը՝ ջրի կառավարման և հարմարվողականության ջանքերը բարելավելու համար : Այս բաղադրիչը կներառի նաև երկու ԿՀՊ, որոնք ուղղված են ՏԿԵՆ-ում, ՋԿ-ում և ՋՕԸ-ներում ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը աջակցելուն:

**բ. Բաղադրիչ 2՝ Գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում** բաղադրիչը կկենտրոնանա Հայաստանի ընտրված տարածքներում արդյունավետ և ֆինանսապես կայուն գյուղական ՋՋ ծառայությունների բարելավված հասանելիությունը ապահովելու վրա: Սա ներառում է ինստիտուցիոնալ հզորացման, կարողությունների ստեղծման, ինչպես նաև կարգավորող բարեփոխումների և տեխնիկատնտեսական հիմնավորումների և ենթակառուցվածքների գնահատումների համադրություն: Այս ենթաբաղադրիչն աջակցելու է առաջնահերթ Ջրամատակարարման և Սանիտարական Վիճակի (ՋՄՄ) ներդրումների տեխնիկատնտեսական հիմնավորումներին և մանրամասն ինժեներական նախագծերին՝ ԲՋՄ-ի երկու փուլերի շրջանակներում կլիմայով պայմանավորված երաշտների, ջրհեղեղների և ծայրահեղ շոգի դեմ դիմացկունությունը բարելավելու համար: Հայաստանի Կառավարության (ՀԿ) հետ համաձայնեցված ներդրումային պլանի հիման վրա, այն կիրականացնի «առանց ափսոսանքի» ենթակառուցվածքների և ծառայությունների բարելավումներ ամենակարևոր չսպասարկվող բնակավայրերում՝ հաշվի առնելով տեխնիկական, տնտեսական, սոցիալ-քաղաքական և ինստիտուցիոնալ գործոնները:

**գ. Բաղադրիչ 3՝ Ոռոգման ենթակառուցվածքների արդիականացում և համակարգի կառավարում** բաղադրիչը կֆինանսավորի ընտրված ոռոգման համակարգերի վերականգնումը և արդիականացումը մայր, երկրորդ և երրորդ կարգի ջրանցքների մակարդակներում, որոնք ներկայումս համատեղ կառավարվում են ջրառ ընկերությունների կողմից՝ խոշոր մայր ջրանցքի և ջրամբարների մակարդակում, և ՋՕԸ-ների կողմից՝ երկրորդ և երրորդ բաշխիչ ցանցերի մակարդակում: Դիտարկվող ոռոգման համակարգերի ընդհանուր մակերեսը կազմում է մոտ

39,580 հա, որը կընտրվի հիդրոլոգիական, տեխնիկական, տնտեսական և գյուղատնտեսական պարամետրերի հիման վրա՝ Շրջանակային մոտեցմամբ[1]: Նմանապես, Փուլ 2-ի համար լրացուցիչ 4 ոռոգման սխեմաներ ընդգրկվել են այս փուլի շրջանակներում դիտարկվելու համար:

**դ. Բաղադրիչ 4՝ Ծրագրի կառավարում:** WISE Ծրագրի համակարգման թիմը (ԾԻԹ) կտեղակայվի Ջրային Կոմիտեում և կստանձնի ծրագրի իրականացման հիմնական պատասխանատվությունը, այդ թվում՝ շինարարական աշխատանքների իրականացումը, դրանց հետ կապված գնումների գործընթացի և ֆինանսական միջոցների կառավարումը (ՖԿ), ընդունված բնապահպանական և սոցիալական կառավարման միջոցառումների հետ համապատասխանության ապահովումը, ինչպես նաև ծրագրի մոնիտորինգն ու գնահատումը (ՄնԳ): Այս բաղադրիչը կֆինանսավորի անձնակազմի ծախսերը; ջրային ոլորտում Միջազգային ֆինանսական կազմակերպության (ՄՖԿ) կողմից ֆինանսավորվող այլ ծրագրերի հետ սույն ծրագրի գործողությունների համակարգումը; ծրագրի ելակետային և ավարտման ուսումնասիրությունների նախագծումը, իրականացումը և հաշվետվությունների ներկայացումը; և գնահատման ուսումնասիրությունների (օրինակ՝ նախնական և տեխնիկատնտեսական հիմնավորումներ), մանրամասն ինժեներական նախագծերի մշակումը և շինարարության վերահսկողությունը: Բաղադրիչը կներառի նաև կարողությունների զարգացման աջակցություն ԾԻԹ-ին, ներառյալ ԾԻԹ-ի աշխատակիցների վերապատաստում:

Ծրագրի իրականացման ընդհանուր պատասխանատվությունը դրվում է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) և Ջրային կոմիտեի (ՋԿ) վրա: Ամենօրյա գործունեության պատասխանատունը Ծրագրի իրականացնող թիմն (ԾԻԹ) ՋԿ կազմում: Բաղադրիչներ 1-3-ի իրականացումը կվարվի ՏԿԵՆ-ի միջոցով: Փոխվարչապետի գրասենյակի մակարդակով կստեղծվի Ծրագրի կառավարման խորհուրդ (ԾԿԽ)՝ վերահսկելու և մշտադիտարկելու Ծրագրի ընդհանուր առաջընթացը: Ծրագրի ղեկավարը ուղղակիորեն կզեկուցի ԾԿԽ-ին: Ջրի ազգային ռազմավարության, Ոռոգման ազգային ռազմավարության և ՋՋ ազգային ռազմավարության մշակումը կիրականացվի փոխվարչապետի գրասենյակի ղեկավարությամբ և կիրականացվի ՏԿԵՆ-ի և ՋԿ-ի կողմից՝ Հայաստանում ջրային ոլորտում ներգրավված բոլոր շահագրգիռ կողմերի, ինչպես նաև ջրային ոլորտի զարգացմանն առնչվող այլ սուբյեկտների սերտ ներգրավմամբ: ԾԻԹ-ն իր կազմում կունենա բնապահպանության և սոցիալական հարցերի մասնագետներ:

## 1.2 Նպատակը և հիմնավորումը

Ծրագրի նախապատրաստման փուլում հստակ տեղեկատվություն չկա տարաբնակեցման ազդեցության չափի և ծավալի մասին, որոնք կարող են առաջանալ Ծրագրի գործունեության արդյունքում: Նման տեղեկատվությունը հասանելի կլինի միայն այն դեպքում, երբ Ծրագրի իրականացման ընթացքում մշակվեն ենթածրագրերի մանրամասն ճարտարագիտական նախագծերը, մասնավորապես 2-րդ և 3-րդ բաղադրիչների ներքո:

Հետևաբար, ծրագրի համար ընդունվել է շրջանակային մոտեցում՝ ուղղորդելու համապատասխան ԲՆՍ գնահատումները և ենթածրագրի մակարդակով կառավարման պլանների պատրաստումը:

Տարաբնակեցման շրջանակը (ՏՇ) անհրաժեշտ է ապահովելու, որ Ծրագրի սոցիալական և բնապահպանական ռիսկերը, մասնավորապես՝ տեղահանման և կենսապահովման ազդեցությունների հետ կապված, արդյունավետորեն բացահայտվեն, կառավարվեն և մեղմվեն, և համապատասխանեն հողի օտարման, հողօգտագործման սահմանափակումների և հարկադիր տարաբնակեցման վերաբերյալ ԲՍՍ5-ի նպատակին: ՏՇ-ն ձգտում է հնարավորինս խուսափել տեղահանություններից և նվազագույնի հասցնել սոցիալական և տնտեսական բացասական ազդեցությունները: Մասնավորապես, ՏՇ-ն ծառայում է հետևյալ նպատակներին.

• Հողերի ձեռքբերման և տարաբնակեցման ազդեցությունների կառավարման ուղղորդող սկզբունքները, ներառյալ փոխհատուցումը և կենսապահովման այլ ձևերը: ՏՇ-ն տրամադրում է կառուցվածքային մոտեցում տարաբնակեցման հետ կապված ռիսկերի լուծման համար՝ սահմանելով հստակ սկզբունքներ, կանոններ և ուղեցույցներ: Այն ապահովում է, որ բոլոր հողերի ձեռքբերումը, տարաբնակեցումը և հողօգտագործման սահմանափակումների կառավարումը, որտեղ կիրառելի է, համահունչ լինեն ԲՍՍ5-ին և Հայաստանի Հանրապետության օրենսդրական դաշտին: Շրջանակը ուղեցույց է տրամադրում ենթածրագրերի տարաբնակեցման պլանների (ՏՊ) նախապատրաստման համար՝ ԲՍՍ5-ով նախատեսված ազդեցությունների առկայության դեպքում:

• Ինտեգրում բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման հետ. քանի որ Բնապահպանական և սոցիալական կառավարման ավելի լայն շրջանակը (ԲՍԿՇ) գնահատում է Ծրագրի գործունեության ռիսկերն ու ազդեցությունները, ՏՇ-ն լրացնում է այն՝ հատուկ կենտրոնանալով տարաբնակեցման հետ կապված ռիսկերի վրա: Այն երաշխավորում է, որ զննության չափանիշներ կիրառվեն բացահայտելու գործունեությունը, որը պահանջում է տարաբնակեցման միջամտություններ և գործարկելու համապատասխան մեղմացնող միջոցառումներ:

• Համապարփակ մեղմացման միջոցառումներ. ՏՔՇ-ն ապահովում է մեղմացման միջոցառումների իրականացման շրջանակ Ծրագրի բոլոր փուլերում՝ սկսած նույնականացումից և ընտրությունից մինչև նախագծում, իրականացում, մշտադիտարկում և գնահատում: Այս նախաձեռնողական մոտեցումը երաշխավորում է, որ տեղահանությունը և կենսապահովման խափանումները նվազագույնի հասցվեն, և որ ազդեցության ենթակա անձինք ստանան արդար փոխհատուցում և աջակցություն:

• Ինստիտուցիոնալ պարտականություններ և կարողությունների գնահատում. ուրվագծելով սոցիալական ռիսկերի դեմ պայքարում ներգրավված գերատեսչությունների դերերն ու պարտականությունները՝ ՏՇ-ն երաշխավորում է, որ տարաբնակեցման կառավարմամբ զբաղվող կազմակերպություններն ունենան անհրաժեշտ կարողություններ՝ արդյունավետորեն իրականացնելու մեղմացնող միջոցառումներ, ներառյալ համապատասխան համակարգումը լիազորված մարմինների հետ՝ իրականացնելու հողի օտարման և տարաբնակեցման գործողությունները ՀՀ իրավական շրջանակում: ՏՇ-ն նաև հստակեցնում է ՏՇ իրականացման առումով կառավարության պարտավորությունները Ծրագրի իրականնացման ընթացքում:

## 1.3 Ծավալը և մոտեցումը

Բաղադրիչ 2-ի և 3-ի շրջանակներում ֆինանսավորվող շինարարական աշխատանքները կարող են պոտենցիալ բացասական ազդեցություններ ունենալ համայնքների վրա՝ հողի հարկադիր օտարման, հողօգտագործման սահմանափակումների և հողի, գույքի, բերքի կամ ծառերի մշտական կամ ժամանակավոր կորստի պատճառով: Բացի այդ, այս աշխատանքները կարող են խաթարել մուտքը և ազդել հողի կամ սեփականություն հանդիսացող տարածքում գործող կամ դրանց առնչվող ձեռնարկությունների վրա:

Ծրագիրը ներդրումներն առնչվում են գծային ենթակառուցվածքներին, ինչպիսիք են ոռոգման ջրանցքները, որոնց երկայնքով կարող են անօրինական հողօգտագործման դեպքեր լինել: Այս տարածքները կարող են ազդեցության ենթարկվել ենթակառուցվածքների արդիականացման, ընդլայնման կամ ուղղության փոփոխության աշխատանքների պատճառով: Բացի այդ, Ծրագիրը կարող է ներառել փոքրածավալ կարգավորող ջրամբարների կառուցում, որը կարող է հանգեցնել հողերի ջրհեղեղման: Թեև կառավարությունը առաջնահերթություն է տալու պետական սեփականություն հանդիսացող հողերի օգտագործմանը, ՏՇ-ն կիրառելի է մասնավոր

հողերի վրա ազդեցության դեպքում՝ անկախ դրանց օրինական կան անօրինական լինելու փաստից:

Ծրագրի նպատակն է կանխել ֆիզիկական տարհանումը և նվազագույնի հասցնել Ծրագրի ազդեցության ենթակա անձանց (ԾԱԵԱ) ապրուստի և եկամուտների վրա որևէ էական ազդեցությունը: Նախագծման գործընթացը կապահովի, որ մանրամասն ճարտարագիտական նախագծերը ներառեն միջոցներ այս նպատակին հասնելու համար, ներառյալ այլընտրանքային լուծումների ուսումնասիրությունն ու իրականացումը:

Համաձայն ԲՍՍ5-ի, ՏՇ-ն կիրառվում է մշտական կամ ժամանակավոր ֆիզիկական և տնտեսական տեղահանման դեպքերում, որոնք բխում են հողի օտարման հետևյալ տեսակներից կամ հողօգտագործման սահմանափակումներից, որոնք Ծրագրի և/կամ հարակից հաստատությունների գործունեության հետևանք են, որը ներկայացված է Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակում (ԲՍԿՇ).

ա. Հողի իրավունքները կամ հողօգտագործման իրավունքները, որոնք ձեռք են բերվել կամ սահմանափակվել օտարման կամ այլ պարտադիր ընթացակարգերի միջոցով՝ ազգային օրենսդրությանը համապատասխան:

բ. Հողի իրավունքները կամ հողօգտագործման իրավունքները, որոնք ձեռք են բերվել կամ սահմանափակվել բանակցությունների արդյունքում գույքի սեփականատերերի կամ հողի նկատմամբ օրինական իրավունքներ ունեցողների հետ, եթե համաձայնության չգալը, կհանգեցնի օտարման կամ այլ հարկադիր ընթացակարգերի:

գ. Հողօգտագործման և բնական ռեսուրսների հասանելիության սահմանափակումներ, որոնք պատճառ են դառնում, որ համայնքը կամ համայնքի խմբերը զրկվում են ռեսուրսների օգտագործման հասանելիությունից, որոնց հանդեպ նրանք ունեն սովորույթով պայմանավորված իրավունք կամ օգտագործման ճանաչված իրավունք: Սա կարող է ներառել իրավիճակներ, երբ Ծրագրի հետ կապված ստեղծվում են օրինականորեն սահմանազատվող պահպանվող տարածքներ, անտառներ, կենսաբազմազանության տարածքներ կամ բուֆերային գոտիներ:

դ. Հողօգտագործման ավանդական կամ ճանաչված իրավունք չունեցող մարդկանց տեղահանում, ովքեր զբաղեցնում կամ օգտագործում են հողը մինչև Ծրագրով սահմանվող կասեցման օրը:

ե. Ծրագրի ազդեցության հետևանքով մարդկանց տեղահանում, որոնց հողը դառնում է անօգտագործելի կամ անհասանելի:

զ. Հողամասի հասանելիության կամ այլ ռեսուրսների օգտագործման սահմանափակում, ներառյալ համայնքային սեփականությունը և բնական ռեսուրսները, ինչպիսիք են արոտավայրերը և ցանքատարածությունները:

է. Հողային իրավունքներ կամ պահանջներ հողի կամ ռեսուրսների նկատմամբ, որոնք ձեռք են բերվում անհատներից կամ համայնքներից՝ առանց փոխհատուցման լրիվ վճարման:

ը. Հողերի օտարման կամ հողօգտագործման սահմանափակումներ, որոնք տեղի են ունեցել նախքան Ծրագիրը, բայց որոնք ձեռնարկվել կամ նախաձեռնվել են Ծրագրի ակնկալիքով կամ Ծրագրին նախապատրաստվելիս:

ՏՇ ներքո կենսամիջոցների վրա ազդեցությունները նվազագույնի հասցնելու Ծրագրի մոտեցման համաձայն Ծրագիրը կորդեգրի հետևյալ մոտեցումները՝

ա. Բանակցային կարգավորումների առաջնահերթություն. Ծրագիրը կձգտի համաձայնությունների հասնել հողի նկատմամբ օրինական իրավունքներ ունեցող գույքի սեփականատերերի և անհատների հետ բանակցությունների միջոցով: Բացի այդ, կուսումնասիրվեն այլընտրանքային ճարտարագիտական լուծումներ՝ խուսափելու հողի

հարկադիր ձեռքբերումից: Օտարումը կդիտարկվի միայն որպես վերջին միջոց, երբ չկան տեխնիկապես իրագործելի նախագծման այլընտրանքներ, կամ երբ նման այլընտրանքները կառաջացնեն հանրային անվտանգության հետ կապված խնդիրներ:

բ. Հողային վեճերի լուծում և փոխհատուցում – հողային պահանջների կամ փոխհատուցման վճարների վերաբերյալ վեճերի դեպքում կարող են դիտարկվել դեպոնացման (էսքրո) պայմանավորվածություններ: Այնուամենայնիվ, դա կարվի միայն այն դեպքում, եթե Ծրագիրը որոշի, որ նման մոտեցումը էական ազդեցություն չի ունենա կենսապահովման վրա, և եթե գույքի սեփականատերերը և/կամ պահանջատերերը համաձայնեն թույլատրել շինարարական աշխատանքները շարունակել, մինչ վեճերը լուծվեն երկրի իրավական համակարգի միջոցով:

գ. Վտարման[5] արգելում – Այս նախագծով ոչ մի վտարում չի թույլատրվի, ինչպես ավելի մանրամասն նկարագրված սկզբունքներում:

դ. Հողամասերի անօրինական օգտագործողների վրա ազդեցությունների մեղմացում – հողերի անօրինական զբաղեցման դեպքում կենսամիջոցներ ապահովող ակտիվների օտարման կամ հողօգտագործման սահմանափակումների առերեսվելիս, առաջնահերթություն կհամարվեն նախագծային այն լուծումները, որոնք նվազագույնի են հասցնում կենսապահովման վրա ազդեցությունները: Բացի այդ, Ծրագիրը աջակցություն կտրամադրի ազդակիր անձանց կենսապահովման և կենսամակարդակի վերականգնման նպատակով՝ ապահովելով նրանց նախքան տարհանման մակարդակը, կամ Ծրագրի իրականացմանը նախորդող գերակշռող մակարդակները, որն ավելի բարձր է:

ՏՇ-ն ընդգրկում է տեղահանվածների հետևյալ կատեգորիաները.

ա. Մարդիկ, ովքեր ունեն պաշտոնական օրինական իրավունքներ հողի կամ ակտիվների նկատմամբ:

բ. Մարդիկ, ովքեր չունեն պաշտոնական օրինական իրավունքներ հողի կամ ակտիվների նկատմամբ, սակայն ունեն պահանջներ հողի կամ ակտիվների նկատմամբ, որոնք ճանաչված կամ ճանաչելի են ազգային օրենսդրության համաձայն.

գ. Մարդիկ, ովքեր չունեն ճանաչելի օրինական իրավունք կամ պահանջ իրենց զբաղեցրած կամ օգտագործած հողի կամ ակտիվների նկատմամբ:

Տեղահանված մարդիկ տերմինը ներառում է հողի օտարման և դրա հետ կապված ազդեցությունների ենթարկված անձանց բոլոր հնարավոր կատեգորիաները. բոլոր նրանք, ովքեր բացասական ազդեցություն են կրել, համարվում են «տեղահանված» այս սահմանման համաձայն՝ անկախ նրանից, թե արդյոք որևէ տեղափոխություն անհրաժեշտ է:

Գլուխ 3-ում նկարագրված ՏՊ-ների մշակման մարդահամարը կսահմանի ազդակիր անձանց կարգավիճակը:

[5] «Հարկադիր վտարումը» սահմանվում է որպես անհատների, ընտանիքների և/կամ համայնքների կամքին հակառակ մշտական կամ ժամանակավոր հեռացումն այն տներից և/կամ հողից, որը նրանք զբաղեցնում են՝ առանց իրավական և այլ պաշտպանության համապատասխան ձևերի տրամադրման և հասանելիության, ներառյալ ԲՍՍ5-ի բոլոր կիրառելի ընթացակարգերն ու սկզբունքները: Վարկառուի կողմից նշանակալից տիրույթի, պարտադիր ձեռքբերման կամ նմանատիպ լիազորությունների իրականացումը չի համարվի հարկադիր վտարում, եթե այն համապատասխանում է ազգային օրենսդրության պահանջներին և սույն ԲՍՍ-ի դրույթներին և իրականացվում է պատշաճ ընթացակարգի հիմնական սկզբունքներին համապատասխան (ներառյալ համապատասխան նախնական ծանուցման տրամադրումը, բողոքներ ներկայացնելու հնարավորությունները, անտեղի,անհամաչափ կամ ավելորդ ուժի կիրառումից խուսափումը):

## 1.4 Հիմնական սկզբունքներ

Ծրագրից պահանջվում է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները՝ խուսափելու կամ նվազագույնի հասցնելու հողի օտարման բացասական ազդեցությունները և Ծրագրի գործողությունների հետ կապված հողօգտագործման սահմանափակումները: ԲՍՍ5-ի հիմնարար նպատակն է ապահովել, որ անխուսափելի ֆիզիկական կամ տնտեսական տարհանման դեպքում տեղահանված անձինք (ինչպես սահմանված է ստորև) փոխհատուցվեն հողի և այլ ակտիվների փոխարինման արժեքով և այլ կերպ՝ անհրաժեշտության դեպքում ստանան աջակցություն բարելավելու կամ գոնե վերականգնելու իրենց եկամուտներն ու կենսամակարդակը:

ԲՍՍ5-ի մյուս նպատակները ներառում են հետևյալը.

ա) խուսափել հարկադիր վտարումից,[6]

բ) բարելավել ֆիզիկապես տեղահանված աղքատ կամ խոցելի անձանց կենսապայմանները՝ համապատասխան բնակարանների ապահովման, ծառայությունների և հարմարությունների հասանելիության և օրինական գրանցում ապահովելու միջոցով[7],

գ) Տարաբնակեցման գործողությունները պատկերացնել և իրականացնել որպես կայուն զարգացման ծրագրեր՝ ապահովելով բավարար ներդրումային ռեսուրսներ, որպեսզի տեղահանված անձանց հնարավորություն ընձեռվի ուղղակիորեն օգտվել ծրագրից, քանի որ դա երաշխավորում է Ծրագրի բնույթը,

դ) Ապահովել, որ տարաբնակեցման աշխատանքները պլանավորվեն և իրականացվեն տեղեկատվության համապատասխան բացահայտմամբ, բովանդակալից խորհրդատվություններով և ազդակիրների տեղեկացված մասնակցությամբ:

Փոխարինման արժեքը (ԲՍՍ5, պար. 2) սահմանվում է որպես գնահատման մեթոդ, որը տալիս է ակտիվները փոխարինելու համար բավարար փոխհատուցում, գումարած ակտիվների փոխարինման հետ կապված գործարքի անհրաժեշտ ծախսերը: Գործող շուկաների առկայության դեպքում փոխարինման արժեքը շուկայական արժեքն է, որը հաստատվել է անշարժ գույքի անկախ և իրավասու գնահատման միջոցով, գումարած գործարքի ծախսերը: Եթե գործող շուկաներ գոյություն չունեն, փոխարինման արժեքը կարող է որոշվել այլընտրանքային միջոցներով, ինչպիսիք են հողի կամ արտադրական ակտիվների ելքային արժեքի հաշվարկը, կամ կառույցների կամ այլ հիմնական միջոցների կառուցման համար չամորտիզացված փոխարինող նյութերի և աշխատուժի արժեքը, գումարած ակտիվների փոխարինման հետ կապված բոլոր գործարքային ծախսերը: Բոլոր այն դեպքերում, երբ ֆիզիկական տեղաշարժը հանգեցնում է անորակ ապաստանի կորստի, փոխարինման արժեքը պետք է առնվազն բավարար լինի բնակարանների գնման կամ կառուցման համար, որոնք համապատասխանում են համայնքի որակի և անվտանգության նվազագույն չափանիշներին:

ԲՍՍ5-ը նաև սահմանում է հիմնական սկզբունքները, որոնց պետք է հետևել տարաբնակեցման պլանավորման և իրականացման ժամանակ: Դրանք ներառում են.

ա) Բոլոր տեղահանված անձինք իրավունք ունեն փոխհատուցում ստանալու հողի և կից գույքի համար կամ փոխհատուցման փոխարեն այլընտրանքային, բայց համարժեք օգնության ձևերի. կորցրած ակտիվների նկատմամբ օրինական իրավունքների բացակայությունը

[6] Սահմանվում է որպես անհատների, ընտանիքների և/կամ համայնքների կամքին հակառակ հեռացում այն տներից և/կամ հողից, որը նրանք զբաղեցնում են՝ առանց իրավական և այլ պաշտպանության համապատասխան ձևերի տրամադրման և հասանելիության, ներառյալ ԲՍՍ5-ի բոլոր կիրառելի ընթացակարգերը:

[7] Կարգավիճակի անվտանգությունը նշանակում է, որ տեղահանված անձինք վերաբնակեցվում են այնպիսի վայրում, որտեղ նրանք կարող են օրինական գրանցվել, որտեղ նրանք պաշտպանված են վտարման վտանգից, և որտեղ նրանց տրամադրված վարձակալության իրավունքները առնվազն նույնքան ամուր են, որքան նրանք ունեին մինչ տեղահանումը:

տեղահանված անձանց չի խանգարի նման փոխհատուցման կամ օգնության այլընտրանքային ձևերի իրավունքից:

բ) Փոխհատուցման դրույքաչափերը վերաբերում են այն գումարներին, որոնք ամբողջությամբ պետք է վճարվեն կորցրած ակտիվի իրավասու սեփականատիրոջը(տերերին) կամ օգտագործողին(ներին)՝ առանց մաշվածության կամ նվազեցման, հարկերի կամ այլ նպատակներով վճարների:

գ) Հողի, շինությունների, չհավաքված մշակաբույսերի և բոլոր այլ հիմնական միջոցների փոխհատուցումը պետք է վճարվի մինչև ազդեցության կամ օտարման պահը:

դ) Երբ մշակվող հողերը պետք է օտարվեն Ծրագրի նպատակների համար, ԾԻԹ-ն/Ջրային կոմիտեն կձգտի ապահովել համարժեք արտադրողական արժեքով փոխարինող հող, եթե դա տեղահանված անձանց նախապատվությունն է:

ե) Համայնքային ծառայությունները և շինությունները կվերանորոգվեն կամ կվերականգնվեն ազդեցության ենթարկվելու դեպքում:

զ) Տեղահանված անձանց հետ պետք է խորհրդակցել մանրամասն նախագծի մշակման ժամանակ, որպեսզի նրանց նախապատվությունները բարձրաձայնվեն և հաշվի առնվեն:

է) ՏՊ-ն (նախագծային և վերջնական տարբերակներում) հրապարակվում է տեղահանված անձանց համար մատչելի ձևով:

ը) Կստեղծվի և կգործարկվի բողոքների լուծման մեխանիզմ, որով տեղահանված անձինք կարող են հետամուտ լինել բողոքներին և ստանալ արձագանք:

թ) Բանակցային կարգավորման գործընթացները ընդունելի են որպես օրինական օտարման այլընտրանք, եթե պատշաճ կերպով իրականացվեն և փաստաթղթավորվեն[8]:

ժ) Հողի նվիրատվությունն ընդունելի է միայն այն դեպքում, եթե այն իրականացվում է ամբողջությամբ կամավոր կերպով և համապատասխան փաստաթղթերով[9]:

---

[8] Բանակցային կարգավորման գործարքների սկզբունքները ներառում են (ա) ծրագրի համար նախատեսվող տեղամասերը ստուգվում են պարզելու սեփականության կամ օգտագործման վերաբերյալ պահանջները կամ այլ ծանրաբեռնվածությունները, որոնք կխոչընդոտեն երկկողմանի բանակցություններին. (բ) եթե տարածքը կոլեկտիվ կամ համայնքային սեփականություն է կամ օգտագործվում է, ապա բանակցային գործընթացը ներառում է այն անհատներին կամ տնային տնտեսություններին, որոնք ուղղակիորեն զբաղեցնում կամ օգտագործում են այն. գ) նախքան բանակցությունները, սեփականատերերը կամ օգտագործողները ծրագրի իշխանությունների կողմից տեղեկացվում են ծրագրի օգտագործման համար համապատասխան հող (և այլ ակտիվներ) ձեռք բերելու իրենց մտադրության մասին. (դ) սեփականատերերը կամ օգտվողները տեղեկացված են իրավական պաշտպանության կամ այլ գործողություններ իրականացնելու իրենց իրավունքների և տարբերակների մասին և ստորագրում են հայտարարություն, որը ցույց է տալիս, որ պատրաստ է բանակցություններ վարել. ե) բանակցությունների սկզբում նախագծի բանակցողները սեփականատիրոջը կամ օգտագործողին ներկայացնում են փոխհատուցման առաջարկվող փաթեթ կամ այլ շահավետ նկատառումներ՝ այս նախնական առաջարկի հիմքի հետ միասին. (զ) սեփականատերերը կամ օգտվողները տեղեկացված են, որ նրանք կարող են հակաառաջարկներ անել, ինչպես որ հարմար գտնեն. է) բանակցություններն իրականացվում են առանց որևէ ձևով հարկադրանքի կամ ահաբեկման. ը) պայմանագիրը, որը սահմանում է վճարման գումարներ կամ այլ համաձայնեցված նկատառումներ, գրվում, ստորագրվում և գրանցվում է. (i) փոխհատուցման վճարումը և ցանկացած այլ համաձայնեցված նկատառումների տրամադրումը կատարվում է նախքան ծրագրի օգտագործման համար ձեռքբերումը. և (ժ) սեփականատերերը կամ օգտվողները պահպանում են բողոքների լուծման մեխանիզմի հասանելիության իրավունքը, եթե նրանք բողոքներ ունեն բանակցային կարգավորման գործընթացի որևէ ասպեկտի վերաբերյալ:

[9] Ծրագրի օգտագործման համար հողի կամ գույքի ցանկացած նվիրատվություն կհամապատասխանի այս սկզբունքներին. (ա) պոտենցիալ դոնորին տեղեկացնում են, որ մերժումը տարբերակ է, և մերժման իրավունքը նշված է նվիրատվության փաստաթղթում, որը դոնորը կստորագրի. բ) նվիրատվությունն իրականացվում է առանց հարկադրանքի, մանիպուլյացիայի կամ այլ ճնշման պետական մարմինների կամ հեղինակությունների կողմից. գ) դոնորը կարող է բանակցել վճարման ինչ-որ ձևի, մասնակի օգտագործման իրավունքների կամ այլընտրանքային օգուտների համար՝ որպես նվիրատվության պայման. (դ) հողի նվիրատվությունն անընդունելի է, քանի դեռ նախատեսված չէ մեղմելու որևէ էական ազդեցություն ներգրավված անձանց եկամուտների կամ կենսամակարդակի վրա. ե) հողի նվիրատվությունը չի կարող տեղի ունենալ, եթե դրա համար անհրաժեշտ լինի տնային տնտեսությունների տեղափոխում. զ) համայնքային կամ կոլեկտիվ հողերի համար նվիրատվությունը կարող է իրականացվել միայն այն անհատների համաձայնությամբ, որոնք ուղղակիորեն օգտագործում են կամ զբաղեցնում են հողը. (է) նվիրաբերվող հողատարածքը զբաղեցված չէ այլ անձանց կողմից, ում վրա կարող է բացասաբար ազդել. ը) նվիրաբերված ցանկացած հող, որը չի

ժա) ՀՀ ՏԿԵՆ-ի Ջրային կոմիտեն պաշտոնական պատասխանատվություն է կրում Ծրագրի տեղամասերի ձեռքբերման հետ կապված բոլոր ծախսերը հոգալու համար, ներառյալ փոխհատուցումը և տեղահանված անձանց հետ կապված այլ նկատառումները: ՏՊ-ն ներառում է գնահատված բյուջեն բոլոր ծախսերի համար, ներառյալ գնաճի և չնախատեսված ծախսերի դեպքերը, ինչպես նաև ֆինանսական չնախատեսված ծախսերի կատարման կազմակերպչական միջոցառումները:

ժբ) Մշտադիտարկման միջոցառումները կիստակեցվեն ՏՊ-ում՝ գնահատելու ՏՊ իրականացման կարգավիճակը և արդյունավետությունը:

---

օգտագործվում նախագծով իր համաձայնեցված նպատակների համար, ժամանակին վերադարձվում է նվիրատուին. և (i) հողի նվիրատվության յուրաքանչյուր դեպք փաստաթղթավորված է, ներառյալ նվիրաբերված հողը կամ ակտիվները նույնականացնող հայտարարություն և նվիրատվության պայմանները, որը ստորագրված է յուրաքանչյուր սեփականատիրոջ կամ օգտագործողի կողմից: Ծրագրի օգտագործման համար հող կամ ակտիվներ նվիրաբերող անձինք կարող են օգտագործել ծրագրի բողոքարկման մեխանիզմը՝ բողոքներ ներկայացնելու նվիրատվության գործընթացի ցանկացած ասպեկտի վերաբերյալ:

# 2. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ՇՐՋԱՆԱԿ

Հայաստանի Հանրապետությունում հողի օտարման և տարաբնակեցման հարցերին առնչվող իրավական դաշտը հիմնականում բաղկացած է հետևյալ օրենքներից, կանոնակարգերից և իրավական ակտերից.

1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունվել է 1995թ., վերջին փոփոխությունները 2015թ.),
2) «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք» (ընդունվել է 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., վերջին փոփոխությունները 2023թ.),
3) «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք» (ընդունվել է 02.05.2001թ., ուժի մեջ է մտել 15.06.2001թ., վերջին փոփոխությունները 2022թ.),
4) «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 27.11.2006թ., ուժի մեջ է մտել 30.12.2006թ., վերջին փոփոխությունները 2018թ.) օրենքի վերնագիրը վերաշարադրվել է հետևյալ խմբագրմամբ «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին»,
5) «Գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 04.10.2005թ., ուժի մեջ է մտել 26.11.2005թ., վերջին փոփոխությունները 2021թ.),
6) «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ընդունվել է 17.06.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., վերջին փոփոխությունները 2023թ.)

## 2.1 Ազգային օրենսդրության և Համաշխարհային բանկի ԲՍՍ5-ի համեմատությունը

Աղյուսակ 1-ը համեմատում է ՀՀ օրենսդրությունը ՀԲ ԲՍՍ5-ի հետ, բացահայտում է բացթողումները և առաջարկում գործողություններ դրանց վերացման համար:

**Աղյուսակ 1 - ՀՀ օրենսդրության և ՀԲ ԲՍՇ-ի համեմատությունը**

| ՀՀ օրենսդրությունը | ՀԲ ԲՍՍ5 – Հողի օտարում, հողօգտագործման սահմանափակումներ և հարկադիր տարաբնակեցում | Եզրակացություն բացերի վերաբերյալ | Գործողություններ բացերը լրացնելու համար |
|---|---|---|---|
| *1. Իրավասություն* | | | |
| (ա) Անձինք, ովքեր ունեն օրինական փաստաթղթեր սեփականության վերաբերյալ (հողի, շենքի և այլն), իրավասու են ստանալու փոխհատուցում օտարվող հողի, ծրագրի կողմից պատճառված վնասների/ | ա) Անձինք, ովքեր հողի նկատմամբ ունեն իրավական գրանցման կարգավիճակ (այդ թվում՝ սովորութային և ավանդական իրավունքներ, որոնք | Օրենքը չի տարածվում առանց օրինական իրավունքի հողօգտագործողների վրա որպես փոխհատուցման | Բացը լրացնելու համար ՏՇ-ն առաջարկում է հետևել՝<br>1) ՀԲ ԲՍՍ5-ի դրույթներին, |

| | | | |
|---|---|---|---|
| ապամոնտաժման և բերքի կորստի համար (Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին օրենք), կամ այն դեպքերում, երբ հողը չի օտարվում, սակայն մասնակիորեն օգտագործվում է պետական ծրագրերի կողմից (սերվիտուտ) (Քաղաքացիական օրենսգիրք (հոդվածներ 210-218), Հողային օրենսգիրք (հոդվածներ 50 և 100)),<br><br>(բ) Անձինք, ովքեր սեփականության նկատմամբ չունեն օրինական իրավունքներ, բայց կարող են օրինականացնել իրենց իրավունքներն օրենքի համաձայն Գերակա շահի վերաբերյալ որոշման ուժի մեջ մտնելուց հետո 15 օրվա ընթացքում, իրավասու են ստանալու փոխհատուցում (Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին օրենք (հոդված 7.4):<br><br>գ) Անձինք, ովքեր կառուցել են շինություններ կամ տնկել ծառեր այլ անձանց պատկանող հողի վրա, չեն կարող ստանալ փոխհատուցում գույքի կորստի համար: | ճանաչվում են երկրի օրենսդրությամբ) ստանում են փոխհատուցում իրենց կորցրած հողի դիմաց փոխարինման արժեքի չափով,<br><br>(բ) Անձինք, ովքեր չունեն իրավական գրանցման կարգավիճակ հողի նկատմամբ, սակայն այդ հողի կամ գույքի նկատմամբ պահանջներ ունեն, եթե այդ պահանջները ընդունելի են երկրի օրենսդրությամբ կամ ընդունելի են դառնումվերաբնակեցման ծրագրով նախատեսված գործընթացով, ստանում են փոխհատուցում իրենց կորցրած տարածքի համար փոխարինման արժեքի չափով:<br><br>(գ) Անձանց, ովքեր չունեն օրինական իրավունք կամ պահանջ իրենց կողմից զբաղեցրած հողի նկատմամբ, տրամադրվում է տարաբնակեցման աջակցություն իրենց զբաղեցրած հողի դիմաց փոխհատուցման տեսքով և անհրաժեշտության դեպքում այլ աջակցություն, եթե ծրագրի տարածքը զբաղեցրել են կասեցման օրից առաջ: | համար իրավասու անձանց | 2) ՀՀ կառավարությունը համաձայնում է կիրառել ՀԲ ԲՍՍ5-ի դրույթները ԶՄԵԾ շրջանակներում |
| ***2. Իրավունքներ*** | | | |
| 1.ՀՀ օրենսդրության համաձայն՝ փոխհատուցումը վճարվում է միայն սեփականատերերին և | ԾԱԵԱ-երը ստանում են տարաբնակեցման աջակցություն իրենց | ՀՀ օրենսդրության և ԲՍՍ5-ի դրույթները նույն | ԲՍՍ5-ի դրույթներով և ՏՇ-ի Իրավունքների |

| | | | |
|---|---|---|---|
| սեփականության իրավունք ունեցող անձանց, եթե սեփականության/գույքային իրավունքները ձեռք են բերվել նախքան սեփականության չափագրման և գնահատման օրը (որը փաստացի «կասեցման օր» է համարվում),<br>2.դրանից հետո կատարված բոլոր բարելավումները, որոնք գերազանցում են օրենքով նախատեսված շրջանակը, ենթակա չեն փոխհատուցման: | զբաղեցրած հողի դիմաց փոխհատուցման տեսքով և, անհրաժեշտության դեպքում, այլ օգնություն՝ սույն քաղաքականությամբ սահմանված նպատակադրումների իրականացման համար, եթե նրանք զբաղեցնում են ծրագրի տարածքը մինչև կասեցման օրը: | են օրինական սեփականատերերի պաշտպանության առումով, սակայն համապատասխան պաշտպանություն և իրավունքներ չեն տրամադրում անօրինական օգտագործողների ն: | մատրիցով պետք է առաջնորդվել |
| 1.Օտարման դեպքում համարժեք փոխհատուցում պետք է վճարվի սեփականատիրոջը. շուկայական արժեքը 15%-ով գերազանցող արժեքը կհամարվի համարժեք փոխհատուցում: (Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին օրենք (հոդված11))<br>2.Շուկայական արժեքը որոշվում է ՀՀ Գնահատման գործունեության մասին օրենքի համաձայն (2005) | Փոխհատուցման չափը պետք է բավարար լինի կորցրած հողի և այլ գույքի փոխարինման համար՝ տեղական շուկայի փոխարինման արժեքի չափով: | ՀՀ օրենսդրությունը և ՀՀ ԲՍՍ5-ը նախատեսում են փոխհատուցում կորցրած հողերի համար: Ազգային օրենսդրությունը ավելի նպաստավոր է օրինական սեփականատեր հանդիսացող ԾԱԵԱ-երի համար: | Բացը լրացնելու համար առաջարկվում է հետևել ՀՀ օրենսդրությանը օրինական սեփականատերերի փոխհատուցման և շինությունների դիմաց փոխհատուցման դեպքում:<br>Մինչդեռ, անօրինական զբաղեցնողների դեպքում կկիրառվեն ՏՇ-ի դրույթները՝ ԲՍՍ5-ի նպատակներին համապատասխան: |
| Օրենքը չի նախատեսում փոխհատուցում տնտեսական և սոցիալական ազդեցությունների, եկամուտների կամ ապրուստի միջոցների կորուստների դիմաց, և չունի դրույթներ աղքատների և անապահով խավերի կարիքների համար օգնության և/կամ նպաստների և/կամ տարաբնակեցման ծախսերի համար (տե՛ս վերը նշված ՀՀ օրենքները) | Համաշխարհային բանկի քաղաքականությունը պահանջում է եկամուտների/կենսամիջոցների վերականգնում, հատուկ ուշադրություն գենդերային ասպեկտներին, աղքատների ու խոցելի խավերի կարիքներին, ինչպես նաև այն ծախսերին, որոնք կատարվել են ցանկացած և բոլոր ԾԱԵԱ-ների կողմից տարաբնակեցման գործընթացում: | Հայաստանի օրենսդրությունը չի նախատեսում կենսամիջոցների վերականգնման որևէ դրույթ և չունի անապահով և խոցելի մարդկանց օգնության կամ աջակցության դրույթներ: Չկան օրենսդրական պահանջներ՝ ազդակիր մարդկանց կենսամիջոցները գնահատելու, տարաբնակեցմա | Բացը լրացնելու<br>համար ՏՇ-ն առաջարկում է հետևել՝<br>1) ՀԲ ԲՍՍ5-ի դրույթներին,<br>2) ՀՀ կառավարությունը համաձայնում է կիրառել ՀԲ ԲՍՍ5-ի դրույթները ԶՄԵԾ շրջանակներում |

| | | | |
|---|---|---|---|
| | | ն ազդեցություններ ը կանխատեսելու կամ տարաբնակեցմա ն ընթացակարգերի ընթացքում հատուկ վերաբերմունք ցուցաբերելու կարիք ունեցող կանանց, խոցելի մարդկանց և այլ խմբերի հատուկ կարիքները լուծելու համար: Օրենքը չի պահանջում կառավարություն ից բարելավել կամ գոնե վերականգնել ազդակիր անձանց կենսամակարդակ ը մինչև ծրագրի վիճակին: | |
| ***3. Տեղեկատվության վերաբերյալ պահանջներ*** | | | |
| Բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին Կառավարության որոշման մասին պետք է պատշաճ ձևով տեղեկացնել սեփականատերերին և գույքի նկատմամբ սեփականության իրավունքներ ունեցող անձանց՝ դրա ուժի մեջ մտնելուց հետո՝ յոթ օրվա ընթացքում: Սեփականատերը և օտարվող գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձինք իրավունք ունեն մասնակցել օտարվող գույքի նկարագրության պատրաստմանը: Նկարագրության արձանագրության պատճենը պետք է ուղարկվի սեփականատիրոջը և օտարվող գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձանց: (Հանրային և պետական կարիքների համար | Հողի, կառույցների և այլ գույքի քանակական վերլուծության և արժեքի որոշման հետ կապված տեղեկությունները, փոխհատուցման իրավունքները և փոխհատուցման գումարներն ու ֆինանսական աջակցությունը պետք է լիովին տրամադրվեն այն անձանց, ում դրանք առնչվում են: | ՀԲ ԲՍՍ5-ի և ԲՍՍ10-ի դրույթներն ավելի ըդգրկուն են քան ազգային օրենսդրությունը | Բացը լրացնելու համար ՏՇ-ն առաջարկում է հետևել՝<br>ՀԲ ԲՍՍ5-ի և ԲՍՍ10-ի դրույթներին ներառյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված մեխանիզմները:<br>Համապատասխան միջոցառումները ներառում են՝ տեղեկատվության հանրայնացում ճիշտ ժամանակին, մասնակցային խորհրդատվությունն եր և հասանելի ԲԼՄ: |

| | | | |
|---|---|---|---|
| սեփականության օտարման մասին օրենքի 7-րդ հոդված)<br>Քաղաքապետարանները/ գյուղապետարանները պետք է համայնքներին լրատվամիջոցներով և հանրային լսումների միջոցով տեղեկացնեն իրենց շրջապատում ակնկալվող փոփոխությունների մասին (Կառավարության 1998թ. հոկտեմբերի 28-ի թիվ 660 որոշում): | | | |
| ***4. Բովանդակալից խորհրդատվություն*** | | | |
| «Հանրային և պետական կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքում չկա առանձնահատուկ դրույթ ազդակիր համայնքներում ազդակիր անձանց համար բովանդակալից խորհրդատվություն անցկացնելու վերաբերյալ: Քաղաքապետարանները/ գյուղապետարանները պետք է համայնքներին լրատվամիջոցներով և հանրային լսումների միջոցով տեղեկացնեն իրենց շրջապատում ակնկալվող փոփոխությունների մասին (Կառավարության 1998թ. հոկտեմբերի 28-ի թիվ 660 որոշում): | ԲՍՍ10-ը պահանջում է ԾԱԵԱ-ների շրջանում անցկացնել բովանդակալից խորհրդատվություն ծրագրի ամբողջ շրջափուլի ընթացքում | Հայաստանի օրենսդրության և ՀԲ ESS10-ի պահանջները տարբեր են: | Բացը լրացնելու<br>համար ՏՇ-ն առաջարկում է հետևել՝<br>1) ՀԲ ԲՍՍ10-ի դրույթներին,<br>2) ՀՀ կառավարությունը համաձայնում է կիրառել ՀԲ ԲՍՍ10-ի դրույթները ԶՄԵԾ շրջանակներում |

## 2.2 Բացահայտված բացերն ու առաջարկվող մոտեցումները

Հողի օտարման և տարաբնակեցման վերաբերյալ Հայաստանի օրենքների ու կանոնակարգերի, ինչպես նաև Համաշխարհային բանկի բնապահպանական և սոցիալական ստանդարտ 5-ի համեմատությունը ցույց է տալիս, որ դրանք ունեն ընդհանուր նպատակ՝ ապահովել, որ ազդակիր կողմերը ստանան արդար և համարժեք փոխհատուցում: Հիմնական բացթողումները ներառում են. i) փոխհատուցման և կենսապահովման աջակցության դրույթների բացակայությունն անօրինական հողօգտագործողների համար, և ii) կենսամիջոցների վերականգնման վերաբերյալ իրավական դրույթների և բովանդակալից խորհրդատվությունների բացակայությունը գործող օրենսդրական շրջանակում:

**Կենսամիջոցների վերականգնում.** գործող օրենսդրական շրջանակային օրենքները հիմք չեն տալիս, թե ինչպես պետք է իրականացվի ազդակիր անձանց կենսամիջոցների վերականգնումը:

o **Ծրագրի մոտեցում.** Հողամասերի հարկադիր օտարման և հողօգտագործման սահմանափակումների հետևանքով կենսամակարդակի վրա զգալի ազդեցություն ունեցող գործողությունները չեն ֆինանսավորվի 1-ին փուլի շրջանակներում: Ծրագրի նպատակն է նվազագույնի հասցնել անբարենպաստ ազդեցությունները՝ առաջնահերթություն տալով հանրային հողերի օգտագործմանը՝ առանց հակասական հողօգտագործման, դրանով իսկ հնարավորինս խուսափելով ֆիզիկական և տնտեսական տեղահանումից:

**Փոխհատուցման իրավասություն.** Հայաստանի օրենքները հստակ փոխհատուցում կամ վերականգնում չեն նախատեսում անօրինական հողօգտագործողների համար, ինչը նրանց խոցելի է դարձնում:

o **Ծրագրի մոտեցում**. ՏՇ-ի իրավունքների մատրիցն ընդգրկում է ԲՍՍ5-ի ներքո ներկայացված Ծրագրի ազդեցության ենթակա անձանց բոլոր կատեգորիաները, ներառյալ օրինական իրավունք չունեցող բնակիչները:

**Իմաստալից խորհրդատվություններ.** Հայաստանի օրենսդրությունը հստակորեն նախանշում է հանրային ծանուցման և տեղեկատվության հրապարակման պահանջները, սակայն չի պահանջում խորհրդատվություններ հողերի օտարման և տարաբնակեցման դեպքում:

o **Ծրագրի մոտեցում.** Ծրագիրը կապահովի ԱԵԱ-ների և նրանց ներկայացուցիչների (օրինակ՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների), հատկապես խոցելի խմբերի բովանդակալից ներառումը խորհրդատվությունների և որոշումների կայացման գործընթացում՝ նախքան Ծրագրի իրականացումը և դրա ընթացքում՝ առաջնորդվելով Ծրագրի Շահակիրների ներգրավման պլանով (ՇՆՊ): Ծրագրի ազդեցության տակ գտնվող բոլոր կողմերի համար կստեղծվի մատչելի ԲԼՄ:

Բոլոր ենթածրագրերում ոչ մի շինարարական աշխատանք չի սկսվի այնքան ժամանակ, քանի դեռ նախագծի կամ դրա ենթաբաղադրիչների հետ կապված բոլոր կիրառելի փոխհատուցման և կենսամիջոցների վերականգնման միջոցառումներն ամբողջությամբ չեն իրականացվել:

ՀՀ կառավարությունը պարտավորվում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ ապահովելու ՏՇ-ի համաձայն պատրաստված ՏՊ-ների և ԲՍՍ5-ի բոլոր համապատասխան դրույթների լիարժեք և արդյունավետ իրականացումը:

# 3. ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՊԼԱՆ

Ծրագրի ցանկացած գործողություն, որը պահանջում է հողի և/կամ դեպի հող մուտքի ձեռքբերում, ինչը հանգեցնում է հողի հարկադիր օտարման կամ հողօգտագործման սահմանափակումների, պահանջում է ՏՊ պատրաստում և ենթակա է ՀԲ կողմից վերանայման և հաստատման: ՏԿԵՆ-ը և ՋԿ-ն պատասխանատու կլինեն ՏՊ-ի պատրաստման և իրականացման համար՝ ԾԻԹ-ի տեխնիկական աջակցությամբ: Անհրաժեշտության դեպքում ՏԿԵՆ-ը և ՋԿ-ն կհամակարգեն համապատասխան գերատեսչությունների և Ծրագրի կապալառուների հետ՝ ապահովելու ժամանակին և արդյունավետ պլանավորում և իրականացում:

ՏՊ-ի պատրաստման գործընթացը սկսվում է այն բանից հետո, երբ որոշվում է առաջարկվող ներդրման ծրագիծը՝ հաստատելով, որ կոնկրետ հողամասեր պետք է ձեռք բերվեն Ծրագրի օգտագործման համար: ՏԿԵՆ-ը և ՋԿ-ն կիրականացնեն տեղանքի նախնական զննում՝ գնահատելու հողօգտագործման և սեփականության ներկայիս կարգավիճակը և առաջնահերթություն կտան այնպիսի տեղանքի ընտրությանը, որը նվազագույնի կհասցնի ֆիզիկական և տնտեսական տարհանումը՝ որպես տեխնիկատնտեսական հիմնավորումների և նախագծման մանրամասն նախապատրաստման մաս:

Եթե ակնկալվում են տարաբնակեցման ազդեցություններ, ՏԿԵՆ-ը և ՋԿ-ն մարդահամարի հետազոտություն կկատարեն (անհրաժեշտության դեպքում՝ խորհրդատուի միջոցով)՝ i) բացահայտելու ընտրված տեղանք(ներ)ից բոլոր տեղահանվող անձանց թիվը, ii) կատարելու համապարփակ գույքագրում և գնահատելու հողը և այլ ակտիվները, որոնք ձեռք կբերվեն Ծրագրի օգտագործման համար, ներառյալ սեփականության իրավունքը և պահանջները:

Գործընթացի հետագա զարգացումը ներկայացված է այս գլխում:

## 3.1 Հողի օտարման սցենարներ

ՏՇ պոտենցիալ իրականացումը, երբ ակնկալվում է ՏՊ-ների մշակում, ներառում է հետևյալ տեսակի ազդեցություններ.

**Աղյուսակ 1: Ծրագրի ներքո տարաբնակեցման պոտենցիալ ազդեցություններ**

| Սցենարներ | Հավանականություն[10] | Ուժգնություն | Գործողություն |
|---|---|---|---|
| Ոռոգման ենթակառուցվածքների և ջրամբարների կառուցման համար մասնավոր հողերի ձեռքբերում. այս գործընթացը ներառում է մասնավոր հողերի ձեռքբերում՝ ոռոգման համակարգի կառուցումը հեշտացնելու համար, ներառյալ փոքրածավալ կարգավորող ջրամբարների և հարակից | Չափավոր (հաշվի առնելով այն փաստը, որ կառավարությունը գերադասում է պետական-համայնքային հողերի օգտագործումը) | Արդյունավետ հողի ազդակիր հատվածը կազմում է >10%[11] | Գույքի օտարման նպատակով հանրային գերակա շահի վերաբերյալ ՀՀ կառավարության որոշում, պատրաստվում է ՏՊ, վերանայվում և |

[10] Շատ անհավանական, անհավանական, չափավոր, հավանական, շատ հավանական

[11] Սեփականատերը կարող է պահանջել ամբողջ հողամասի օտարում, եթե ազդեցության է ենթարկվում արդյունավետ հողի 10%-ից ավելին

| | | | |
|---|---|---|---|
| հեղեղատար տարածքների ստեղծումը: | | | հաստատվում է ՀԲ կողմից |
| Պետական սեփականություն հանդիսացող վարձակալված հողերի հողօգտագործման վրա ազդեցությունները, ներառյալ՝ i) մշտական և ժամանակավոր կառույցները, ii) շարժական ակտիվները և սարքավորումները, և iii) գյուղատնտեսական գործունեությունը, ներառյալ մշակաբույսերի մշակումը: | Չափավոր | >10% եկամտի կորուստ | Նույնը |
| Ազդեցություններն անօրինական հողօգտագործողների վրա ներառում են մշտական և ժամանակավոր կառույցների կորուստը, շարժական ակտիվների տեղահանումը և գյուղատնտեսական գործունեության խաթարումը, ինչպիսիք են մշակաբույսերի մշակումը: | Չափավոր | >10% եկամտի կորուստ | Նույնը |
| Շինարարական գործունեության համար հողի օգտագործման ժամանակավոր սահմանափակումներ՝ եկամտի հնարավոր կորստով, ինչպիսիք են բերքի կորուստը և ձեռնարկատիրական գործունեության խափանումները | Չափավոր | >10% եկամտի կորուստ | ՏՊ-ն պատրաստվել է և վերանայվել և հաստատվել ՀԲ-ի կողմից, փոխհատուցումը կատարվում է տեղական իշխանությունների կողմից |
| Շինարարության հետ կապված գործունեության համար կապալառուների կողմից վարձակալվող տարածքներն օգտագործվում են բազային ճամբարների ստեղծման, շինանյութերի պահեստավորման և սարքավորումների տեղադրման համար: | Հավանական | - | Վարձակալությունը պետք է լինի կամավոր՝ հողատերերի հետ երկկողմանի համաձայնագրի միջոցով՝ ԾԻԹ-ի և վերահսկող ինժեների կողմից նախնական վերանայմամբ |

ՋՈԾԲ ծրագրի աշխատանքները կիրականացվեն հիմնականում պետական կամ համայնքային պատկանելիության տարածքներում, որտեղ տարաբնակեցման էական ռիսկեր

չկան: Այնուամենայնիվ, Ծրագրի շրջանակներում կարող է ակնկալվել մասնավոր հողերի որոշակի օգտագործում, ինչպես նաև պետական կամ համայնքային հողերի վրա կարող են լինել անօրինական կառույցներ: Ծրագրի ազդեցության ենթակա անձանց գույքի կամ եկամուտների և ապրուստի միջոցների վրա բոլոր ազդեցությունների համարժեք մեղմացումը ենթադրում է համապատասխանություն Համաշխարհային բանկի ԲՍՇ-ին, ՎՊ-ների պատրաստում և իրականացում:

ՋՈԾԲ ծրագրի իրականացման կառույցը կստեղծվի ՏԿԵՆ-ի և ՋԿ-ի շրջանակներում, որոնք ՋՈԾԲ ծրագրի բոլոր բաղադրիչների կառավարման համար պատասխանատու հիմնական գերատեսչություններն են և/կամ կստեղծվի ջրային նոր գործակալությունում Ծրագրի արդյունավետությունից հետո:

## 3.2 ՏՇ-ների նախապատրաստում

ՏՇ-ն ուրվագծում է Համաշխարհային բանկի ԲՍՍ5-ի և ՀՀ կառավարության օրենսդրական դաշտի համաձայն տարաբնակեցման պլանների (ՏՊ) պատրաստման կառուցվածքային գործընթացը: Այս գործընթացը ապահովում է արդար, թափանցիկ և կայուն հողերի ձեռքբերում, փոխհատուցում և տարաբնակեցում ԾԱԵԱ-ների համար: Այս գործընթացի հիմնական քայլերը ներառում են՝

### 3.2.1 Ենթածրագրի նույնականացում և զննություն

Հիմնվելով տեխնիկատնտեսական հիմնավորման և մանրամասն նախագծման վրա և հետևելով հանրային շահերի վերաբերյալ ՀՀ կառավարության որոշմանը, ՏԿԵՆ-ը և ՋԿ-ն ԾԻԹ-ի տեխնիկական աջակցության միջոցով պետք է.

• Բացահայտեն հողի պահանջները ծրագրի գործունեության համար, ներառյալ ոռոգման ջրանցքները, կարգավորող ջրամբարները (և հեղեղատարի տարածքները), ինչպես նաև ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքները:

• Գնահատեն Ծրագրի ազդեցությունը հողի սեփականության, պոտենցիալ տեղահանման և ջրային ռեսուրսների հասանելիության վրա:

• Դասակարգեն տարհանման ծավալը (հողի փոքրածավալ կամ մասնակի ձեռքբերում կամ ամբողջական տարհանում): Հողերի ձեռքբերման և կենսապահովման վրա զգալի ազդեցություն ունեցող հնարավոր ենթակառուցվածքները պետք է բացառվեն 1-ին փուլից:

• Ներգրավեն հողատերերի, ֆերմերների և շահագրգիռ կողմերի հետ՝ գնահատելու նախնական մտահոգությունները և բանակցային կարգավորումներին մասնակցելու պատրաստակամությունը: Այս քայլը կարող է գնահատել նաև ժամկետային վեճերի առկայությունը:

### 3.2.2 Ծավալի որոշում և ելակետայինուսումնասիրություններ

Եթե որևէ ենթածրագրով հողի օտարում նախատեսվի, ՏԿԵՆ-ը և ՋԿ-ն՝ ԾԻԹ-ի և տեխնիկական խորհրդատուների աջակցությամբ պետք է.

• Ծրագրի շրջանակներում ազդակիր մարդկանց տրամադրի օտարման մասին նախնական ծանուցում հանրային շահերից ելնելով և հայտարարել վերջնաժամկետի մասին (տես ենթաբաժին 3.3):

• Իրականացնի կադաստրային քարտեզագրում՝ որոշելու հողի սեփականությունը, սահմանները և սեփականության կարգավիճակը, ներառյալ վարձակալական վեճերի և կոնֆլիկտների առկայությունը:

• Իրականացնի մարդահամար՝ մշակելու ազդեցության ենթակա հողերի և ակտիվների համապարփակ գույքագրում, ներառյալ գյուղատնտեսական հողերը, տները, ձեռնարկությունները, ծառերը և մշակաբույսերը, ակտիվները, ներառյալ հողի վրայի և/կամ հարակից շարժական ակտիվները:

• Իրականացնի սոցիալ-տնտեսական հետազոտություն՝ կենտրոնանալով հողի ձեռքբերման արդյունքում անմիջականորեն ազդեցության ենթարկված անձանց վրա, ներառյալ խոցելի տնային տնտեսությունները:

• Գնահատի հողի ձեռքբերման հետ կպված բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, հատկապես կենսամիջոցների, հողօգտագործման սահմանափակումների և բնական ռեսուրսների վրա, այդ թվում ջրերի հասանելիության վերաբերյալ: Սա կարող է առնչվել տեղանքի համար առանձնահատուկ ՇՄՍԱԳ-ի հետ:

• Եթե առկա են բացեր ազգային շրջանակում, քննարկի համապատասխան իշխանությունների հետ՝ լուծելու այդ բացերը՝ համաձայն ԲՍՍ5-ի, սույն ՏՇ-ի ուղղորդմամբ:

Ծրագրի համատեքստում խոցելի տնային տնտեսությունները ներառում են, բայց չսահմանափակվելով հետևյալով.

- Կին գլխավորով տնային տնտեսություններ, որտեղ չկան աշխատունակ տարիքի անդամներ (սա չի ներառում ՀՀ զինված ուժերում պարտադիր ծառայություն անցնող, 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող կամ մինչև 23 տարեկան առկա ուսուցմամբ սովորող ուսանող);
- Տնային տնտեսություններ, որոնք գլխավորում են կենսաթոշակային տարիքի անձինք (տարեցներ) (սա չի ներառում ՀՀ զինված ուժերում պարտադիր ծառայություն անցնող, 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող կամ մինչև 23 տարեկան առկա ուսուցմամբ սովորող ուսանող);
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ընտանեկան նպաստների համակարգում հաշվառված և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան նպաստ ստացող անապահով տնային տնտեսություններ. եթե սոցիալ-տնտեսական հետազոտության հիման վրա ԾԱԵՏՏ-ն ճանաչվի որպես աղքատ, բայց գրանցված չլինի Ընտանեկան նպաստների համակարգում, ՀՏՁՀ-ն ժամանակ կհատկացնի ԱԵՏՏ-ին գրանցվելու համար: Հենց որ այս տնային տնտեսությունները գրանցվեն Ընտանեկան նպաստի համակարգում, նրանք նպաստի իրավունք կստանան:
- Տարհանված ընտանիքներ, որտեղ ընտանիքի բոլոր չափահաս անդամներն ունեն փախստականի կարգավիճակ:

### 3.2.3 Շահակիրների ներգրավում և խորհրդատվություն

Որպես ենթածրագրի գործունեության նախապատրաստման մաս, ՏԿԵՆ-ը և ՋԿ-ՆԾԻԹ-ի ԾԻԹ-ի տեխնիկական աջակցության միջոցով պետք է.

• Մշակի ենթածրագրի մակարդակի ՇՆՊ՝ բացահայտելով բոլոր ազդակիր մարդկանց, ներառյալ խոցելի խմբերը:

• Կազմակերպի համայնքային հանդիպումներ՝ բացատրելու հողի ձեռքբերման գործընթացները, փոխհատուցման մեխանիզմները և անհրաժեշտության դեպքում ապրուստի միջոցների աջակցությունը: Սա ներառում է ՋՕԸ-ների և համայնքի համապատասխան ներկայացուցիչների ներգրավվածություն՝ ապահովելու, որ նման խորհրդատվությունները ներառական և հասանելի լինեն տարբեր խմբերի համար:

• Արձանագրի հետադարձ կապը և բողոքները ՏՇ-ում ընդգրկվելու համար:

### 3.2.4 Տարաբնակեցման պլանների մշակում

Հիմնվելով սոցիալ-տնտեսական և մարդահամարի տվյալների և շահագրգիռ կողմերի հետ խորհրդատվությունների արդյունքների վրա, ներառյալ մտահոգությունները և դժգոհությունները, ՏԿԵՆ-ը և ՋԿ-ն ԾԻԹ-ի և տեխնիկական խորհրդատուների աջակցության միջոցով պետք է.

• Հաստատի հողի օտարման պահանջները՝ վերջնական մանրամասն նախագծերի հիման վրա տարբերակելով մշտական ձեռքբերման (օրինակ՝ ջրամբարների տարածքներ, ջրանցքների վերահաստատում) և ժամանակավոր օգտագործման հողերի (օրինակ՝ շինարարական սերվիտուտներ):

• Գնահատում կատարի անկախ գնահատողի կողմից: Ազդեցության ենթակա հողերի և գույքի գնահատումն իրականացվում է «Գնահատման գործունեության մասին» օրենքի համաձայն, որը սահմանում է Հայաստանում անշարժ գույքի գնահատման գործունեության հիմունքները:

• Որոշի փոխհատուցման ձևերը ներառյալ՝ հողը հողի դիմաց, կանխիկ վճարումներ և այլընտրանքային կենսապահովման ծրագրեր, իրավունքների մատրիցի (Հավելված 1) և ազդակիր մարդկանց նախասիրությունների համապատասխան՝ հիմնվելով խորհրդատվությունների վրա:

• Ստեղծի տեղամասի մակարդակի հետադարձ կապի և բողոքների լուծման մեխանիզմ (ՀԿԲԼՄ)՝ հողի գնահատման, փոխհատուցման և այլընտրանքային պայմանավորվածությունների հետ կապված վեճերը լուծելու համար՝ ՏՇ ներքո ՀԿԲԼՄ-ի պահանջներին համապատասխան:

• Պատրաստի իրականացման բյուջե, որը մանրամասն կներկայացնի փոխհատուցման, հողի գնման, տեղափոխման և կենսամիջոցների վերականգնման ծախսերը:

### 3.2.5 Հաստատում և հանրայնացում

ՏՊ-ների նախագծերը պատրաստելուց հետո, ՏԿԵՆ-ը և ՋԿ-ն պետք է՝

- ՏՊ-ն ներկայացնեն ՀԲ և կառավարության համապատասխան գերատեսչություններ հաստատման համար.
- Հրապարակի ՏՊ-ն հանրության շրջանում հայերեն լեզվով՝ տրամադրելով հստակ բացատրություններ և ազդակիր անձանց իրավունքները.
- Լուծել շահակիրների հետադարձ արձագանքը, ներառյալ տեղանքի և փոխհատուցման գումարների հետ կապված մտահոգությունները, որոնք ներկայացվում են ՀԿԲԼՄ-ի միջոցով.
- Ապահովի, որպեսզի բոլոր ազդակիր անձինք նախքան Ծրագրի իրականացումը հասկանան իրենց իրավունքներն ու իրավասությունները:

## 3.3 Կասեցման օր

Փոխհատուցման իրավասությունը կորոշվի վերջնաժամկետով, որից հետո ծրագրի ազդեցության տակ գտնվող տարածքները զբաղեցնող անձինք այլևս փոխհատուցման իրավունք չեն ունենա՝ համաձայն ԲՍՍ5-ի: Այս վերջնաժամկետը, որը սահմանվել է Ծրագրի ազդեցության

ենթարկված անձանց (ԾԱԵԱ) մարդահամարի հարցման մեկնարկի ժամանակ, նախնական հանրային քննարկումների ընթացքում կհաղորդվի ազդեցության ենթարկված համայնքներին: Ազդեցության ենթարկված ակտիվները կփաստաթղթավորվեն մանրամասն գույքագրման միջոցով, որը կանցկացվի ազդեցության ենթարկված անձանց և տեղական իշխանությունների կամ նրանց օրինական ներկայացուցիչների ներկայությամբ, եթե ակտիվների սեփականատերերը անհասանելի են: Ամեն ջանք կգործադրվի, որպեսզի ազդակիր անձինք կարողանան վերանայել և ստորագրել ակտիվների փաստաթղթերն իրենց համար հարմար ժամանակի՝ պատշաճ կերպով գրանցելով բոլոր բացակայությունները:

Բոլոր մարդիկ, կազմակերպությունները, որոնք տեղափոխվում են Ծրագրի տարածք և/կամ այն մարդիկ, ովքեր շինարարական աշխատանքներ են իրականացնում, ծառեր տնկում և այլն, կասեցման օրից հետո, իրավասու չեն որպես ԾԱԵԱ և, հետևաբար, որևէ փոխհատուցում չեն ստանա: Այնուամենայնիվ, նրանց նախապես կտեղեկացվի՝ խնդրելով ազատել իրենց տարածքները և ապամոնտաժել ազդակիր կառույցները նախքան Ծրագրի իրականացումը: Նրանց ապամոնտաժված կառույցների նյութերը չեն առգրավվելու, նրանք չեն վճարելու ոչ մի տուգանք կամ պատժամիջոց: Դա հեշտացնելու համար Ծրագիրը նրանց տրամադրության տակ կդնի նրանց տեղափոխման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցները:

## 3.4 ՏՊ-ների իրականացում

ՏԿԵՆ-ը և ՋԿ-ն կհանձնարարեն որևէ մարմնի գործելու որպես ՏՊ իրականացման խումբ՝ ներառյալ կատարելու բոլոր ամիրաժեշտ թարմացումները: Այս դեր կարող է հանձնարարվել ԾԻԹ-ի որևէ ստորաբաժանման կամ մեկ այլ լիազոր մարմնի: Գործելով ՏԿԵՆ-ի և ՋԿ-ի վերահսկողության ներքո՝ ստորաբաժանումը կհամագործակցի համապատասխան գերատեսչությունների հետ հեշտացնելու օտարման գործընթացները, տրամադրելու իրավական օգնություն և իրականացնելու կենսապահովման միջոցներ՝ համաձայն ՏՊ-ների: Օտարված հողերի և գույքի փոխհատուցման վճարները ֆինանսավորվելու են պետական բյուջեից և պետք է ավարտվեն մինչև շինարարական աշխատանքների մեկնարկը:

Իրականացման ստորաբաժանումը պատասխանատու կլինի հետևյալ գործողությունների համար՝

- Մանրակրկիտ խորհրդատվություն ԾԱԵԱ-ների և տեղական իշխանությունների հետ: Հասարակությանն անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում և թափանցիկ ու ժամանակին տեղեկացվածության բարձրացման հաղորդակցություն տարաբնակեցման խնդիրների շուրջ բոլոր ազդակիր համայնքների (ոչ միայն ԾԱԵԱ-ների) հետ,
- ՏՊ մարդահամարի և ակտիվների գույքագրման տվյալների ստուգում,
- Կադաստրային և տեղագրական հետազոտությունների կատարում և չափագրման ու գույքագրման տվյալների ճշգրտում, եթե պահանջվում է հնարավոր նախագծային փոփոխություններով.
- Պայմանագրերի և/կամ համաձայնագրերի պատրաստում, որոնք պետք է ստորագրվեն ԾԱԵԱ-ների կողմից, բանակցություններ և համաձայնեցումներ ԾԱԵԱ-ների հետ,
- Անհրաժեշտության դեպքում պատրաստել փաստաթղթեր նոր հողամասերի գրանցման կամ հողամասի համար սերվիտուտի կադաստրային գրանցման համար պահանջվող փաստաթղթերի պատրաստում,
- Փոխհատուցում. Դրամական փոխհատուցումները կվճարվեն բանկային փոխանցումով: Եթե ԾԱԵԱ-ն չունի բանկային հաշիվ, ապա Ծրագրի կողմից այն անվճար կբացվի նրա համար,

- Բողոքների ընթացակարգերի վերահսկում,

- Գործերի դատական քննություն, համաձայնություն ձեռք չբերելու դեպքում,

- Վերահսկողություն անհրաժեշտ ենթակառուցվածքների կառուցման և ցանկացած փոփոխության դեպքում, որը կարող է ազդել ՏՊ-ների շրջանակի վրա՝ որպես մ/տադիտարկման և գնահատման գործընթացի մաս (տես Բաժին 3.6),

- ՏՊ ավարտական հաշվետվության պատրաստում:

Հողատարածքի և հարակից ակտիվների ձեռքբերումը տեղի կունենա միայն այն բանից հետո, երբ սույն ԲՍՍ-ին համապատասխան փոխհատուցումը հասանելի կլինի, և, անհրաժեշտության դեպքում, տարհանված մարդկանց տարաբնակեցումը կիրականացվի և տարհանվածներին փոխադրման աջակցություն կտրամադրվի ի լրումն փոխհատուցմանը: Նաև կենսամիջոցների վերականգնման և բարելավման ծրագրերը կսկսվեն ժամանակին, որպեսզի ապահովվի, որ ազդակիր անձինք բավականաչափ պատրաստված լինեն օգտվելու այլընտրանքային կենսապահովման հնարավորություններից, եթե նման անհրաժեշտություն առաջանա:

## 3.5 Հանրայնացում և խորհրդատվություններ

ՎՊ-ն ամփոփում է ծրագրի, դրա հավանական ազդեցությունների և առաջարկվող տարաբնակեցման միջոցառումների վերաբերյալ տեղահանված անձանց հետ խորհրդակցելու համար ձեռնարկված միջոցառումների արդյունքները: Այն նաև ամփոփում է տեղահանված անձանց հետ անցկացված հանդիպումները (ամսաթվերը, վայրերը, մասնակիցների թիվը), ներառյալ մեկնաբանությունները, հարցերը և մտահոգությունները, որոնք արտահայտվել են տեղահանված անձանց կողմից այս հանդիպումների ընթացքում, ինչպես նաև նրանց տրված պատասխանները: ԾԻԹ-ն տեղահանված անձանց (և հանրությանը) ներկայացնում է ՏՊ-ի նախագիծը Բանկի վերանայումից հետո և առաջարկվող ծրագրի վերաբերյալ տեղահանված անձանցից կարծիք է հավաքում: Վերջնական ՏՊ-ի հանրայնացումը տեղի է ունենում ստացված մեկնաբանությունների քննարկումից և Բանկի ընդունումից հետո:

Շահակիրների ներգրավման գործողությունները, որոնք նկարագրված են ՋՈԾԲ ծրագրի համար առանձին պատրաստված ՇՆՊ-ում, կսկսվեն Ծրագրի մեկնարկից հետո:

Ակնկալվում է, որ տարբեր խմբերում շահագրգիռ կողմերի ներգրավվածության մեխանիզմները կներառեն, բայց չեն սահմանափակվի հանրային խորհրդատվություններով, հարցազրույցներով և ֆոկուս խմբերի քննարկումներով, ներառյալ իրազեկումը, որպեսզի ապահով հարթակներով հնարավոր լինի արտահայտել մտահոգությունները:

Համապատասխան տեղեկատվության նախնական հրապարակումը թիրախ խմբերին հասանելի ձևաչափով և լեզվով կիրականացվի հանրային խորհրդատվություններից, հարցազրույցներից և/կամ ֆոկուս խմբերի քննարկումներից առաջ: Սա կներառի նաև հետադարձ կապի և բողոքների լուծման մեխանիզմի (ՀԿԲԼՄ) հասանելի ալիքների հանրայնացումը:

Ջննության գործընթացում պետք է բացահայտվեն ազդակիր համայնքի խոցելի խմբերը, օրինակ՝ մեծ թվով կնոջ կողմից ղեկավարվող տնային տնտեսություններ, էթնիկ փոքրամասնություններ, հաշմանդամություն ունեցող անձինք, ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններ և այլն: Այս խմբերը բովանդակալից խորհրդատվության կարիք ունեն: Շահագրգիռ կողմերի բովանդակալից ներգրավվածությունը պետք է կենտրոնանա խորհրդատվությունների, համագործակցության և շահագրգիռ կողմերի լիազորությունների, ինչպես նաև երկկողմանի հաղորդակցության վրա: Հատուկ տեղեկատվական և հաղորդակցման նյութեր կարող են պատրաստվել և տարածվել այդ խմբերի միջև, ֆոկուս խմբերի կամ կլոր սեղանի քննարկումներ, այդ խմբերի ներկայացուցիչների կամ առանձին մարդկանց հետ կարող

են կազմակերպվել առանձին հանդիպումներ՝ բացահայտելու իրենց կարծիքը Ծրագրի մասին, նրանց մտահոգությունները և Ծրագրում ընդգրկվելու կարիքները: Մտահոգությունները և առաջարկությունները պետք է հնարավորինս հաշվի առնվեն մանրամասն նախագծերի մշակման ժամանակ և հետադարձ կապ տրամադրեն շահագրգիռ կողմերին:

2025 թվականի ապրիլի 15-ին Ջրային կոմիտեում կայացավ հանրային քննարկում՝ ԲՍՍ10-ի պահանջներին և Ծրագրի ՇՆՊ-ում նախատեսված ընթացակարգերին համապատասխան: Մասնակցության հրավեր էր ուղարկվել ազգային և մարզային մակարդակի շահագրգիռ կողմերին՝ ներառյալ համապատասխան պետական մարմինները և հասարակական հաստատությունները, հանդիպումից 8 օր առաջ, և տրամադրվել էր ՋՈԾԲ ծրագրի ԲհՍ փաստաթղթերի նախնական տարբերակների հղումը: Վերջիններս Ջրային կոմիտեի կայքում հայերեն և անգլերեն լեզուներով հրապարակվել էին 10 օր առաջ: Հանդիպման մասին տեղեկությունը նաև հրապարակվել էր սոցիալական ցանցերում (Ջրային կոմիտեի ֆեյսբուքյան էջում):

Հանդիպման նպատակն էր շահագրգիռ կողմերին ներկայացնել Համաշխարհային բանկի Ծրագիրը և ՇՆՊ նախագիծը ԲՍՀՊ, ԲՍԿՇ, ՏՇ և ԱԿԸ նախագծերի հետ միասին՝ ստանալու կարծիքներ և վարելու քննարկումներ յուրաքանչյուր փաստաթղթի վերաբերյալ:

Ներկայացումները ընդգրկում էին հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերը, առաջարկվող մեղմացման միջոցառումները, շահակիրների նույնականացումը, ներգրավման գործունեությունը և մեթոդները, տարաբնակեցման ռիսկերն ու ազդեցությունները, ազդակիր անձանց իրավունքներն ու իրավասություններն, ինչպես նաև աշխատանքի անվտանգության և առողջության ռիսկերը և դրանց մեղմացման միջոցառումները, ԲհՍ փաստաթղթերի ինտեգրումը մրցութային փաթեթներում, Ծրագրի գործողությունների վերահսկումը և մշտադիտարկումը՝ ՀԲ-ի ԲՍՍ-ների և ազգային օրենքներին համապատասխան:

Հանդիպման ընթացքում մասնակիցները ներկայացրին մի շարք առաջարկություններ մշակված փաստաթղթերի հետագա իրականացման և դրանցում նշված միջոցառումների վերաբերյալ: Լոռու մարզպետարանի ներկայացուցչի կողմից կատարվեց առաջարկություն. մասնավորապես՝

Հողերի սեփականության իրավունքները ստուգել/ճշգրտել համայնքերում, քանի որ կադաստրային քարտեզներում երբեմն առկա են անճշտություններ:

Շահագրգիռ կողմերը տեղեկացան, որ նրանց կարծիքները կքննարկվեն և անհրաժեշտության դեպքում կինտեգրվեն վերջնական ԲհՍ փաստաթղթերում: Հանդիպման արձանագրությունը ներկայացված է Հավելված 4-ում:

Լրացուցիչ հանրային քննարկումներ կկազմակերպվեն թիրախային մարզերում՝ ԲՍՍ10 պահանջներին, ՀՀ համապատասխան օրենսդրությանը և Ծրագրի ՇՆՊ-ին համապատասխան:

## 3.6 Մշտադիտարկում և գնահատում

ՏԿԵՆ-ը և ՋԿ-ն ԾԻԹ-ի միջոցով կիիրականացնի ՏՊ իրականացման մ/տադիտարկումը և ՀԲ-ին պարբերաբար հաշվետվություններ է կտրամադրի ՀԲ-ին հողի օտարման և ՏՊ-ի իրականացման կարգավիճակի վերաբերյալ: Կստեղծվեն ինստիտուցիոնալ պայմաններ տարաբնակեցման գործողությունների ներքին մշտադիտարկման համար, և անհրաժեշտության դեպքում կներգրավվեն արտաքին մշտադիտարկման գործակալություններ՝ անկախ վերահսկողություն ապահովելու համար, հատկապես համապատասխանության ստուգումների և հաշվետվությունների համար: ՏՊ-ները կթարմացվեն ՏՊ-ի վերջնական աուդիտի արդյունքների հիման վրա: Ներքին մմշտադիտարկման հաշվետվությունները կպատրաստվեն

ԾԻԹ-ի կողմից և կներառվեն Ծրագրի առաջընթացի բոլոր կանոնավոր հաշվետվություններում, ընդ որում ՏՊ-ի ավարտական հաշվետվությունը կներկայացվի ՀԲ-ին յուրաքանչյուր ՏՊ-ի ավարտից հետո:

Ներքին մշտադիտարկման և վերահսկողության շրջանակում կկատարվեն հետևյալ գործողությունները՝ ստուգելու, որ.

- մարդահամարի հետազոտությունը կատարվել է բոլոր ԾԱԵԱ-ների շրջանում,
- ՏՊ պատրաստվել է և ելակետային հետազոտություն իրականացվել (համապատասխանության դեպքում), որտեղ դրանք պահանջվել են,
- գույքի գնահատումը և տարաբնակեցումն իրականացվել է սույն ՏՇ-ի և համապատասխան ՏՊ-ի դրույթներին համապատասխան.
- տարաբնակեցման բոլոր միջոցառումներն իրականացվել են հաստատված կարգով.
- տարաբնակեցման միջոցառումների իրականացման համար միջոցները տրամադրվեն անհապաղ, բավարար իրենց նպատակների համար և ծախսվեն սույն ՏՇ-ի և համապատասխան ՏՊ-ի դրույթներով:

Եթե արտաքին մշտադիտարկման անհրաժեշտություն լինի զգալի ազդեցությունների կամ բողոքների պատճառով, կներգրավվի անկախ մարմին իրականացնելու հետևյալը՝

ա) գնահատի հողի և ակտիվների օտարման սոցիալական և տնտեսական ազդեցությունը ԾԱԵԱ-ների վրա.

բ) ստուգի, թե արդյոք ԲՍՍ5-ի նպատակներին հասել են՝ հատկապես ազդեցությունից խուսափելու, մեղմելու և կենսամիջոցները վերականգնելու առումով.

գ) անհրաժեշտության դեպքում սահմանել վերականգնողական միջոցառումներ.

դ) ըստ անհրաժեշտության, տրամադրի առաջարկներ տարաբնակեցման իրականացման բարելավման համար՝ ապահովելու սույն ՏՇ-ով սահմանված սկզբունքների և նպատակների իրականացումը:

# 4. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

ՏՊ-ի պատրաստումն ու իրականացումը պահանջում է բազմաթիվ շահագրգիռ կողմերի սերտ համագործակցություն՝ ՏԿԵՆ-ի և ՋԿ-ի ղեկավարությամբ և համակարգմամբ: Արդյունավետ պլանավորումը և իրականացումը կարևոր են կիրառելի քաղաքականություններին համապատասխանությունն ապահովելու և ԾԱԵԱ-ների իրավունքներն ու բարեկեցությունը պաշտպանելու համար:

ԾԻԹ-ն առանցքային դեր կխաղա ՏՊ գործընթացի դյուրացման գործում՝ ապահովելով համապատասխան փորձագետների առկայությունը՝ աջակցելու ՏՊ իրականացման և՛ նախապատրաստմանը, և՛ վերահսկմանը: Սա ներառում է շահակիրների ներգրավման վերահսկում, բողոքների լուծում և երաշխավորում, որ տարաբնակեցման բոլոր միջոցառումներն իրականացվում են ԲՍՍ5-ին համապատասխան: Համակարգված ջանքերի միջոցով ՏՊ-ն նպատակ ունի նվազագույնի հասցնել խափանումները, խթանել արդար փոխհատուցումը և աջակցել ազդակիր համայնքների ապրուստի միջոցների վերականգնմանը:

Հատուկ դերերն ու պարտականությունները ուրվագծվում են հետևյալ կերպ.

## 4.1 Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեն

ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեն կրում է սույն ՏՇ-ի ներքո գործող բոլոր գործողությունների վերահսկման և մշտադիտարկման ընդհանուր պատասխանատվությունը: ՋԿ-ն կուղղորդի, կվերահսկի և կզեկուցի ՏՊ-ների պատրաստման և իրականացման առաջընթացի մասին և կլուծի տարաբնակեցման հարցերը, որոնք պահանջում են գործողություններ և համակարգում բոլոր շահագրգիռ կողմերի հետ, ներառյալ ազգային և տեղական ինքնակառավարման մարմինները, համայնքները, քաղաքացիական հասարակությունը և այլն:

Տարաբնակեցման հետ կապված սոցիալական ռիսկերի գնահատման, համապատասխան եզրակացությունների տրամադրման և պահանջվող ցանկացած ՏՊ-ի պատրաստման պատասխանատվությունը կրում է ԾԻԹ-ի մասնագետների խումբը: Խմբի կազմում կլինեն ծրագրի համակարգող, իրավաբան, բնապահպանական և սոցիալական մասնագետներ: Ամենօրյա պատասխանատվությունը կրելու է սոցիալական մասնագետը, ով Ծրագրի ճարտարագետների օգնությամբ կստանա ելակետային տեղեկատվություն, կիրականացնի տեղանքի տեսողական զննում և կպատրաստի վերը նշված փաստաթղթերը:

Տարաբնակեցման քաղաքականությանն առնչվող բոլոր գործողությունների մեկնարկի և իրականացման վերջնական պատասխանատվությունը կրելու է ՋԿ-ն/ՏԿԵՆ-ը:

## 4.2 Ֆինանսների նախարարություն

Ֆինանսների նախարարությունը ՏՊ-ների իրականացման բյուջեները կտրամադրի ՏԿԵՆին/ՋԿ-ին ՀՀ կառավարության կողմից վերջնական ՏՊ-ների պաշտոնական հաստատումից հետո:

## 4.3 Կադաստրի կոմիտե

Կադաստրի կոմիտեն գործադիր մարմին է, որը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը անշարժ գույքի միասնական ազգային կադաստրի պահպանման ուղղությամբ: Կադաստրի կոմիտեն պատասխանատու է

անշարժ գույքի սեփականության կարգավիճակի մասին տեղեկատվության տրամադրման համար և պատասխանատու է սեփականության պետական գրանցման համար:

## 4.4 Մարզային և տեղական ինքնակառավարման մարմիններ

Մարզային և տեղական ինքնակառավարման մարմինները (ՏԻՄ) կաջակցեն սոցիալական ազդեցության գնահատման հետ կապված հարցումներին, ԾԱԵԱ-ների հետ խորհրդատվությունների անցկացմանը և բողոքների լուծմանը:

Ստորև ներկայացված Նկար 1-ը նկարագրում է ՏՊ իրականացման դերերն ու պատասխանատվությունները:




**Նկար 1 – Տարաբնակեցման ռազմավարության և պլանների իրականացման հիմնական դերակատարները**

ՏՊ-ի պատրաստման և իրականացման պատասխանատվությունը կրում է ԾԻԹ-ն: Անհրաժեշտության դեպքում, ԾԻԹ-ն կիրականացնի իր լիազորությունները՝ համակարգելու գործողությունները ցանկացած այլ ներգրավված գործակալության, իրավասու մարմինների կամ Ծրագրի կապալառուների հետ՝ խթանելու ժամանակին և արդյունավետ պլանավորումն ու իրականացումը:

ՏՊ-ները պետք է հաստատվեն ՀՀ կառավարության կողմից, նախքան դրանց իրականացման սկիզբը: ՋԿ-ն պատասխանատու կլինի Համաշխարհային բանկի հետ համակարգման համար՝ ՏՊ-ների վերանայման և հաստատման նպատակով:

ՏՊ-ի նախապատրաստումը կսկսվի այն բանից հետո, երբ որոշվի առաջարկվող ներդրման ծրագիծը՝ հաստատելով, որ որոշակի տեղամաս (կամ տեղամասեր) պետք է ձեռք բերվեն ծրագրի օգտագործման համար: ԾԻԹ-ն նախապես կգնի առաջարկվող տեղամասերը՝

բացահայտելու ընթացիկ օգտագործման և վարձակալության պայմանագրերը և կնույնականացնի այն տարածքները (կամ տարածքը), որը նվազագույնի կհասցնեն ֆիզիկական և տնտեսական տարհանումը: ԾԻԹ-ն այնուհետև կիրականացնի մարդահամարի հետազոտություն՝ ընտրված վայրում (կամ տեղամասերում) բոլոր տեղահանվածներ թիվը ճշտելու համար, ինչպես նաև գույքագրելու և գնահատելու հողը և այլ ակտիվները, որոնք պետք է ձեռք բերվեն Ծրագրի օգտագործման համար:

ՋԿ-ն կարող է ներգրավել տարբեր խորհրդատուների՝ աջակցելու տարաբնակեցման հետ կապված խնդիրներին և գործողություններին՝ ապահովելով ՏՇ և առնչվող այլ կանոնակարգերի հետ համապատասխանությունը: Այս խորհրդատուները վճռորոշ դեր կխաղան Ծրագրի ազդեցությունները նվազագույնի հասցնելու, էական տվյալների հավաքագրման և տարաբնակեցման գործընթացը հեշտացնելու գործում: Հիմնական դերերը ներառում են.

**ա. Նախագծման խորհրդատուն (ՆԽ)** կպատրաստի նախագծեր ենթածրագրերի համար: ՆԽ-ն պատասխանատու կլինի ենթածրագրի տարածքի հստակեցման և գտնվելու վայրի որոշման համար՝ հաշվի առնելով տարաբնակեցման ազդեցությունից խուսափելու կամ նվազագույնի հասցնելու ՏՇ սկզբունքները: ՆԽ-ն (ենթակապալառուի միջոցով) պատասխանատու կլինի ազդակիր հողատարածքների, ակտիվների, ինչպես նաև ԾԱԵԱ-ների և նրանց ընտանիքների/տնտեսությունների վերաբերյալ տվյալների հավաքագրման համար՝ անհրաժեշտության դեպքում մարդահամարի և սոցիալ-տնտեսական հետազոտության, Ծրագրի և ենթածրագրի հետ կապված տեղեկատվության տարածման համար նախագծման փուլում,

**բ. Վերահսկող խորհրդատու** կներգրավվի շինարարական աշխատանքները վերահսկելու և դրա համապատասխանությունը նախագծին, ինչպես նաև Ծրագրի բոլոր սոցիալական և բնապահպանական պահանջներին ապահովելու համար: Վերահսկողության խորհրդատուն ԾԻԹ-ին կբ ՋԿ-ին կտրամադրի սոցիալական կառավարման մշտադիտարկման տվյալներ:

**գ. Լիցենզավորված գնահատողի** հետ պայմանագիր կկնքվի՝ իրականացնելու ազդեցության ենթակա ակտիվների գնահատումը և փոխհատուցման հաշվարկը՝ համաձայն ՀՀ Գնահատման օրենքի և չափորոշիչների, ԲՍՍ5-ի և սույն ՏՇ-ի, ըստ անհրաժեշտության:

**դ. Հարցումների խորհրդատուի** հետ պայմանագիր կկնքվի՝ իրականացնելու մարդահամար և սոցիալ-տնտեսական հետազոտություն (ՍՏՀ) ԾԱԵՏՏ-ների շրջանում և պատրաստելու հաշվետվություն արդյունքների վերաբերյալ:

Այս խորհրդատուները միասին կնպաստեն տարաբնակեցման արդյունավետ և թափանցիկ գործընթացին՝ ապահովելով, որ ԾԱԵԱ-ները ստանան արդար փոխհատուցում և աջակցություն՝ համաձայն Ծրագրի քաղաքականության:

Կենսամիջոցների վրա նվազագույն ազդեցությամբ հողերի փոքրածավալ ձեռքբերման դեպքերում ՋԿ-ն կարող է ներառել ՏՊ-ի պատրաստման առաջադրանքը ՆԽ-ի տեխնիկական առաջադրանքի պայմանների (ԱՊ) մեջ, ապահովելով միջոցներ, շահերի բախումը կանխելու համար: Այս դեպքում ՋԿ-ն/ԾԻԹ-ն առանձին պայմանագիր չի կնքի լիցենզավորված գնահատողի կամ հետազոտության խորհրդատուի հետ, քանի որ ՆԽ-ն կներգրավի ենթակապալառուի՝ պահանջվող ՏՊ-ն պատրաստելու համար:

Հողամասերի լայնածավալ ձեռքբերման դեպքում ՋԿ-ն կներգրավի մասնագիտացված խորհրդատու՝ ՏՊ-ի պատրաստման և իրականացման համար: Բացի այդ, արտաքին մշտադիտարկման գործակալության (ԱՄԳ) հետ պայմանագիր կկնքվի՝ ապահովելու անկախ վերահսկողություն և տարաբնակեցման քաղաքականության համապատասխանությունը:

ՏՇ իրականացման յուրաքանչյուր փուլի հատուկ պարտականությունները ամփոփված են հետևյալ աղյուսակում.

**Աղյուսակ 2: Դերերն ու պատասխանատվությունները**

| N | ԴԵՐԵՐ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|
| | **Տարաբնակեցման պլանի մշակում** | |
| 1 | Մարդահամարի և կորուստների մանրամասն գույքագրման հետազոտության գործիքների պատրաստում, ՏՊ պատրաստման ժամանակացույց | ԾԻԹ, խորհրդատու |
| 2 | Կադաստրային տեղեկատվության և քարտեզների ձեռքբերում | PCT, Consultant |
| 3 | Օտարման ծանուցում, տեղանք այցելություն, նախնական գնահատում | ԾԻԹ |
| 4 | Կառավարության որոշման հաստատում՝ նախնական ուսումնասիրությունների համար, անհրաժեշտության դեպքում | ՏԿԵՆ, ՋԿ |
| 5 | Կասեցման օրվա որոշում | ՋԿ, ԾԻԹ |
| 6 | Հանրային քննարկման անցկացում ԾԱԵԱ-ների հետ | ԾԻԹ, խորհրդատու |
| 7 | Մարդահամարի անցկացում | ԾԻԹ, խորհրդատու |
| 8 | Հողամասի սեփականության ստուգում և իրավունք չունեցող հողօգտագործողների նույնականացում, հողի օրինականացում, անհրաժեշտության դեպքում | ԾԻԹ, խորհրդատու |
| 9 | Մանրամասն չափագրման ուսումնասիրության անցկացում | Խորհրդատու |
| 10 | Ակտիվների գույքագրման անցկացում | ԾԻԹ, խորհրդատու |
| 11 | Հանրային գերակա շահի որոշում, անհրաժեշտության դեպքում | ՀՀ կառավարություն |
| 12 | Ազդակիր ակտիվների գնահատում | Խորհրդատու |
| 13 | Ակտիվների նկարագրության արձանագրության ստորագրում | ԾԻԹ, խորհրդատու |
| 14 | ՏՊ հաշվետվության պատրաստում | ԾԻԹ, խորհրդատու |
| 15 | ՏՊ-ի հաստատման ստացում ՀԲ-ից | ՀԲ |
| 16 | ՏՊ հանրայնացում | ԾԻԹ, ՋԿ |
| 17 | ՏՊ լրամշակում շահակիրների դիտողությունների համաձայն | ԾԻԹ, խորհրդատու |
| 18 | ՀԲ վերջնական վերանայում և հաստատում | ՀԲ |
| 19 | ՏՊ-ի ներկայացում ՀՀ կառավարություն, անհրաժեշտության դեպքում, կամ ՏԻՄ-երին | ԾԻԹ, ՋԿ |
| 30 | ՏՊ իրականացման նախապատրաստական գործողություններ | ԾԻԹ |

| | | |
|---|---|---|
| 31 | ՏՊ իրականացման ստորաբաժանման ստեղծում, անհրաժեշտության դեպքում | ՋԿ, ՏԿԵՆ |
| 32 | Բողոքների լուծման մեխանիզմի ստեղծում ներառյալ բողոքների լուծման կոմիտեն | ՋԿ, ՏԿԵՆ |
| 33 | Վճարման եղանակի, ինչպես նաև Առևտրային բանկերի նույնականացում, եթե այդպիսիք կան, փոխհատուցման հատկացման/փոխանցման համար | ԾԻԹ |
| | **ՏՊ իրականացում** | |
| 34 | Իրավական դրույթներ/ հողի օտարման պայմանագրերի կնքում | ԾԻԹ, ՋԿ |
| 35 | Փոխհատուցման վճարումներ | ՀՀ ՖՆ, ՏԻՄ-եր |
| 36 | Վեճերի և բողոքների լուծում | ԾԻԹ, ՋԿ, ՏԿԵՆ |
| 37 | Ավարտական հաշվետվության պատրաստում | ԾԻԹ |
| 38 | Ավարտական հաշվետվության հաստատում | ՀԲ |
| 39 | Շինարարական աշխատանքների մեկնարկ | ԾԻԹ |
| 40 | ՏՊ իրաանացումից հետո սոցիալական ազդեցության գնահատում և աուդիտ (եթե կիրառելի է) | ԾԻԹ, խորհրդատու |
| | **Շարունակական առաջադրանքներ** | |
| 41 | ՏՊ իրականացման ներքին մշտադիտարկում | ԾԻԹ |
| 42 | Արտաքին մշտադիտարկման և համապատասխանության հաշվետվության պատրաստում Արտաքին մշտադիտարկման գործակալության (ԱՄԳ) կողմից (եթե կիրառելի է) | Խորհրդատու |
| 43 | Բողոքների լուծում | ԾԻԹ |

# 5. ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ և ԲՈՂՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ

Ապահովելու համար, որ Ծրագրի ազդեցությանը ենթակա անձինք կարողանան մտահոգություններ հայտնել հողի ձեռքբերման գործընթացի, փոխհատուցման հաշվարկների և վճարումների, օգնության տրամադրման կամ այլ համապատասխան հարցերի վերաբերյալ, ՏՊ-ն կստեղծի հասանելի և արձագանքող հետադարձ կապի և բողոքների լուծման մեխանիզմ (ՀԿԲԼՄ) տեղամասի մակարդակով: ՏՊ-ն կուրվագծի ներկայացման ընթացակարգերը, կազմակերպչական միջոցառումները և կատարողականության չափանիշները բողոքների քննարկման համար, ինչպես նաև միջոցառումներ՝ ԾԱԵԱ-ներին և համայնքներին տեղեկացնելու բողոքների գործընթացի և արձագանքման ակնկալիքների մասին:

ՀԿԲԼՄ-ն կստեղծի թափանցիկ, վստահելի և արդար գործընթաց բողոքներն արդյունավետ լուծելու համար՝ խթանելով վստահությունը և համագործակցությունը որպես համայնքային խորհրդատվական ավելի լայն մոտեցման մաս: Այն կհեշտացնի ուղղիչ գործողությունները, որտեղ անհրաժեշտ են և կծառայի որպես անբաժան գործիք տարաբնակեցման հետ կապված վեճերի կառավարման համար:

ՀԿԲԼՄ-ն հատուկ կանդրադառնա Ծրագրի 2-րդ և 3-րդ բաղադրիչներից բխող բողոքներին՝ կապված համապատասխան ենթածրագրերի շրջանակում ՏՇ-ի իրականացման հետ: ԾԻԹ-ն պատասխանատու կլինի ՀԿԲԼՄ-ի կառավարման և դրա իրականացման վերահսկման համար՝ տեղամասի մակարդակով: ԾԻԹ-ն, համագործակցելով Ծրագրի տեխնիկական վերահսկողության խորհրդատուի հետ, կսահմանի դերերն ու պարտականությունները բողոքների լուծման համար և կորոշի գործողությունների համապատասխան ուղղությունները: Բացի այդ, խորհրդատուն կաջակցի ԾԻԹ-ին քննարկվող բողոքների լուծման մշտադիտարկման հարցում:

Ծրագրի ՀԿԲԼՄ-ն կանդրադառնա տարաբնակեցման հետ կապված մի շարք խնդիրների, ներառյալ հողերի և ակտիվների ձեռքբերումը, փոխհատուցման վեճերը (օրինակ՝ փոխհատուցման չափը, մնացած հողամասերի համապատասխանությունը), հողօգտագործման սահմանափակումները, բիզնեսի խափանումները և շինարարական կամ վերականգնողական աշխատանքների հետևանքով պատճառված վնասները: Հաշվի առնելով կարևորությունը՝ ՀԿԲԼՄ-ն նաև համապարփակ մանրամասնված է ՏՇ-ում՝ Ծրագրի ՇՆՊ-ի համաձայն մտահոգությունները լուծելու հետևողականություն և արդյունավետություն ապահովելու համար:

## 5.1 Նպատակը

Ծրագրի ՀԿԲԼՄ-ն ծառայում է որպես հիմնական գործիք

- Հնարավորություն տալու ԾԱԵԱ-ներին ներկայացնել բողոքներ և լուծել վեճերը, որոնք կարող են ծագել Ծրագրի իրականացման ընթացքում:
- Ապահովելու, որպեսզի ԾԻԹ-ն բացահայտի և իրականացնի համապատասխան, փոխադարձ ընդունելի փոխհատուցման միջոցներ՝ բողոքատուներին գոհացնելու նպատակով:
- Բողոքների և գանգատների քննարկման մատչելիության և թափանցիկության խթանում:
- Արդյունավետ կառավարելու վեճերի լուծումը՝ նվազագույնի հասցնելով ձգձգումները և նվազեցնելով դատական վարույթների անհրաժեշտությունը՝ որպես գործողությունների սկզբնական միջոց:

## 5.2 Քայլեր

Ծրագրի ՀԿԲԼՄ-ն կներառի հետևյալ քայլերը.

• **Քայլ 1 - բողոքների արձանագրում.** գրավոր կամ բանավոր հեռախոսային թեժ գծի/բջջային հեռախոսի, փոստի, սոցիալական մեդիայի (ՖԲ և այլն), կայքի և բողոքների գրանցամատյանի միջոցով առանցքային անձի/համայնքների հետ կապի մասնագետի կողմից և ուղղորդվում ԾԻԹ 24 ժամվա ընթացքում: ՀԿԲԼՄ-ն նաև թույլ կտա անանուն բողոքներ բարձրաձայնել և հասցեագրել:

• **Քայլ 2 - բողոքների մշակում.** բողոքների դասակարգում՝ հիմնված բողոքների և բողոքողների տիպաբանության վրա՝ ավելի արդյունավետ պատասխան տալու համար և հնարավորինս անհապաղ նախնական պատասխանի տրամադրում: Տիպաբանությունը հիմնված կլինի բողոքատուի բնութագրերի վրա (օրինակ՝ խոցելի խմբեր, հաշմանդամություն ունեցող անձինք և այլն), ինչպես նաև բողոքի բնույթի վրա:

Ծրագրի մակարդակով Բողոքների լուծման հանձնաժողով (ԲԼՀ) կստեղծվի՝ տարաբնակեցման հետ կապված բողոքներն ու գանգատները լուծելու և բոլոր տարաձայնությունները դատարան ուղարկելու գործընթացը կանխելու համար:

ՀԿԲԼՄ-ի 1-ին քայլը ներառում է բողոքի գրանցումը (գրավոր կամ բանավոր) ՀԿԲԼՄ-ի մատյանում, որը կպատրաստվի և կտրամադրվի համայնքներին և կապալառուներին: Բողոքները կարձանագրվեն համայնքի մակարդակով կենտրոնական կետերի կամ ԾԻԹ-ի կողմից փոխհատուցման գումարների, տեխնիկական սխալների, հետաձգված վճարումների և այլնի հետ կապված հարցերի համար:

1-ին փուլի բողոքը լուծելու ժամկետը 7 օր է:

Բողոքը գրանցվելուց հետո կանցնի հետևյալ ուղիներով՝ որոշելու գործողությունների ընթացքը (Քայլ 2).

- Տեխնիկական սխալներ (այսինքն՝ կադաստրային չափագրում, գնահատում, ակտիվների բացթողում և այլն). տեխնիկական թիմը կստուգի ազդեցության ենթակա ակտիվների չափման և գնահատման ճիշտությունը: Եթե թիմը սխալներ հայտնաբերի բոլոր ակտիվների չափման և գնահատման մեջ, ապա կմշակվի Ուղղիչ գործողությունների պլան (ՈՒԳՊ), որը կուղարկվի ՀԲ՝ վերանայման և հաստատման համար: Մեկ ամսվա ընթացքում (Քայլ 2) բողոքատուին կուղարկվի արձագանք: ՀԲ-ի կողմից ՈՒԳՊ-ի հաստատումից հետո, այն արագ կիրականացվի: Եթե բարձրացված բողոքը սխալ է, ապա Բողոքատուն կտեղեկացվի բողոքը մերժելու պատճառի մասին:

- Իրավական վեճեր. կարող են առաջանալ, եթե բողոքատուն դժգոհ է բողոքի լուծումից: Նա կարող է դիմել դատարան: Դատարանում դատավարությունը կարող է տևել մի քանի ամիս, մեկ տարի կամ ավելի: Հողային պահանջների կամ փոխհատուցման վճարների վերաբերյալ վեճերի դեպքում կարող է դիտարկվել դեպոնացումը, եթե նման մոտեցումը չի առաջացնի էական ազդեցություն կենսապահովման վրա, և եթե գույքի սեփականատերերը և/կամ հայցվորները համաձայնեն թույլատրել շինարարական աշխատանքները շարունակել, մինչ վեճերը լուծվեն երկրի իրավական համակարգի միջոցով:

- ՏՊ-ների իրականացում (այսինքն՝ փոխհատուցման գումարներ, հետաձգված վճարումներ, սխալ վճարումներ և այլն). դժգոհությունները հնարավորության դեպքում կլուծվեն տեղական մակարդակով: Այն դեպքում, երբ դա հնարավոր չէ, դրանք կուղարկվեն Ծրագրի մակարդակով ստեղծված ԲԼՀ: Հանձնաժողովը կվերանայի տեղեկատվությունը և կբացահայտի սխալ կատարողականի պատճառը: Բողոքները և

դրանց լուծումը կարձանագրվեն և կլուծվեն համապատասխան ժամկետում՝ ոչ ավելի, քան 1 ամսվա ընթացքում:

2-րդ փուլի բողոքը լուծելու ժամկետը 30 օր է (1 ամիս):

## 5.3 Դիմում

Այս փուլում բողոքը կվերանայվի ԾԻԹ/ՋԿ-ի մակարդակով: Չլուծված բողոքները, բողոքատուի համաձայնությամբ, գրավոր կուղարկվեն ԾԻԹ/ՋԿ: Նմանապես, ԾԱԵԱ-ները, ովքեր դժգոհ են ներկայացված և/կամ առաջարկվող որոշումներից, կարող են ուղարկել իրենց բողոքները ԾԻԹ/ՋԿ: Համայնքի ԲԼՄ առանցքային անձը կօգնի նրան պաշտոնական բողոք ներկայացնելու հարցում: ԾԻԹ-ի ԲԼՄ համակարգողը կուսումնասիրի դժգոհ բողոքատուների գրավոր բողոքները և դրանք ներքին կարգով կուղարկի համապատասխան բաժիններ՝ շտկելու համար: Ուղղորդման ժամկետը 10 օր է: Որոշման մասին բողոքատուն տեղեկացվում է առավելագույնը 30 օրվա ընթացքում:

## 5.4 Բողոքների փակում

Բողոքը կհամարվի «լուծված» կամ «փակված», երբ ձեռք կբերվի երկու կողմերի համար բավարար լուծում և ուղղիչ միջոցառումների հաջող իրականացումից հետո: Երբ առաջարկվող լուծումը համաձայնեցվում է Ծրագրի և բողոք ներկայացնողի միջև, դրա իրականացման համար անհրաժեշտ ժամանակը կախված կլինի լուծման բնույթից: Այնուամենայնիվ, այս գործողությունները կիրականացվեն բողոքի գրանցումից հետո մեկ ամսվա ընթացքում և կվերահսկվեն մինչև ավարտը: Բողոքի լուծումից հետո և բողոքը ներկայացնողի հետ համաձայնեցնելուց հետո, բողոքի կարգավիճակը ԲՄ մատյանում կնշվի որպես «Փակված»: ԲՄ մատյանը կներկայացվի Համաշխարհային բանկի թիմին:

Այնուամենայնիվ, որոշակի իրավիճակներում Ծրագիրը կարող է «փակել» բողոքը, նույնիսկ եթե բողոք ներկայացնողը գոհ չէ արդյունքից: Օրինակ, եթե բողոքը վերաբերում է նախագծի տեխնիկական լուծումներին, և այն չի կարող փոփոխվել, կամ բողոքը հիմնավորում չունի և պարունակում է սխալ տեղեկատվություն կամ տվյալներ: Նման դեպքերում Ծրագիրը փորձում է ուսումնասիրել բողոքը և հանգում է մերժման վերաբերյալ եզրակացության: Բողոքի կարգավիճակն այս դեպքում կլինի «Մերժված»: Որոշման մասին բողոքատուն կտեղեկացվի բողոքի գրանցման օրվանից մեկ ամսվա ընթացքում:

## 5.5 Բողոքի արձանագրում և փաստաթղթավորում

ԾԻԹ-ն կնշանակի ԲԼՄ առանցքային անձ՝ բողոքների գրանցամատյանը վարելու՝ բոլոր ստացված բողոքների գրառումը պահելու համար: Գրանցամատյանը կպարունակի անհատի կամ կազմակերպության անունը, որը բողոք է ներկայացնում, բողոքի ամսաթիվը և բնույթը, ձեռնարկված ցանկացած հետագա գործողություն, Կապալառուի կամ այլ համապատասխան կողմից իրականացված լուծումներն ու ուղղիչ գործողությունները, բողոքի վերջնական արդյունքը կամ կարգավիճակը:

ԾԻԹ-ն որպես ԲեՍ հաշվետվությունների և Ծրագրի առաջընթացի հաշվետվությունների մաս պետք է ներկայացնի բողոքների լուծման կարգավիճակը:

## 5.6 ՀԿԲԼՄ առանցքային անձի կոնտակտային տվյալները

ՀԿԲԼՄ առանցքային անձի և ԲԼՄ համակարգողի կոնտակտային տվյալները կարող են ներկայացվել հետևյալ ձևաչափով.

| Նկարագրություն | Կոնտակտային տվյալներ |
|---|---|
| ԲԼՄ առանցքային անձ համայնքի մակարդակում | |
| ԲԼՄ համակարգող | |
| Ում: | |
| Հասցե: | |
| Էլ հասցե: | |
| Կայք: | |
| Հեռախոս: | |

Ծրագրի մասին տեղեկատվությունը հասանելի կլինի ԾԻԹ/ՋԿ-ի կայքում և կտեղադրվի Ծրագրի տարածքում ազդակիր համայնքների տեղեկատվական վահանակների վրա: Տեղեկատվություն կարելի է ստանալ նաև ԲՄ առանցքային անձից։

***ՀԿԲԼՄ-ն չի խոչընդոտի դատական ատյաններ դիմելու հնարավորությանը։***

# 6. ԱՐԺԵՔ ԵՒ ԲՅՈՒՋԵ

Ստորև բերված Աղյուսակ 4-ը ներկայացնում է ՋՈԾԲ Ծրագրի շրջանակներում տարաբնակեցման աշխատանքների իրականացման գնահատված բյուջեն: Բյուջեն նախատեսված է ՏՊ(ների) պատրաստման համար (եթե այդպիսիք կան), իսկ բյուջեի ֆինանսավորման աղբյուրը կլինեն Ծրագրի կառավարման 4-րդ բաղադրիչի վարկային միջոցները:

Տարաբնակեցման փոխհատուցումները կկատարվեն ՀՀ պետական բյուջեից, եթե տարաբնակեցման ազդեցության ծավալը մեծ լինի և պահանջվի օտարում մայր և երկրորդ կարգի ջրանցքների վերականգնման կամ ՕԿՋ-ների կառուցման համար: Երրորդ կարգի (ներտնտեսային) ջրանցքների վերականգնման համար փոքրածավալ տարաբնակեցման ազդեցությունների դեպքում տարաբնակեցման փոխհատուցումը կկատարվի համայնքային բյուջեների միջոցով, որը պետք է քննարկվի և համաձայնեցվի ՏԻՄ-երի հետ:

**Աղյուսակ 4. Տարաբնակեցման պատրաստման և իրականացման արժեք և բյուջե (ԱՄՆ $)**

| Գործողություն | Միավոր արժեք | Քանակ | Ընդամենը |
|---|---|---|---|
| Տարաբնակեցման պլանի պատրաստման և իրականացման խորհրդատվություն | 1000 | 5 | 5000 |

# Հավելված 1: ՏՊ իրավունքների մատրից

| Կորստի տեսակը | Կիրառում Առանձնահատկություն | ԾԱԵԱ-ների սահմանումը | Փոխհատուցման իրավունքները |
|---|---|---|---|
| **Հող** | | | |
| Հողի մշտական կորուստ (գյուղատնտեսական, առևտրային, բնակելի կամ այլ) | ԾԱԵԱ-ներ, ովքեր կորցնում են հող՝ անկախ ազդեցության չափից | Սեփականության իրավունքը գրանցած անձիք | Դրամական փոխհատուցում լրիվ փոխարինման արժեքով կամ փոխարինող հողատարածք նույն արժեքով ԾԱԵԱ-ների համար ընդունելի վայրում, հնարավորության դեպքում: Եթե մնացող հողակտորները դառնան անօգտագործելի, ապա Ծրագիրը ձեռք կբերի ամբողջ հողամասը ԾԱԵԱ-ի պահանջով: Ծրագիրը ԾԱԵԱ-ներին կտրամադրի տեխնիկական, ֆինանսական և/կամ նյութական աջակցություն կենսամիջոցների ամբողջական վերականգնման նպատակով: |
| | | Սեփականատեր, որի իրավունքները ենթակա են գրանցման՝ օրենքով սահմանված կարգով | ԾԱԵԱ-ները կգրանցեն իրենց իրավունքները և կստանան դրամական փոխհատուցում լրիվ փոխարինման արժեքով, և անհրաժեշտության և հնարավորության դեպքում, աջակցություն ԾԱԵԱ-ների համար ընդունելի վայրում փոխարինող հողատարածք ձեռք բերելու համար: |
| | | Վարձակալներ | Վարձակալության վճարը 3 ամսվա համար և միջոցառումներ՝ կենսամիջոցների ամբողջական վերականգնումն ապահովելու համար՝ ըստ անհատական պլանի, ինչպես անհրաժեշտ է համարվել ՏՊ-ի պատրաստման ժամանակ: Եթե վարձակալները նախապես վճարել են վարձավճարը, ապա ցանկացած չօգտագործված մասը պետք է վերադարձվի նրանց սեփականատիրոջ կողմից կամ որպես փոխհատուցում Ծրագրից: |
| | | Անօրինական բնակիչ/ԾԱԵԱ առանց գրանցման կամ օրինական փաստաթղթավորման/օրինականացման ոչ ենթակա սեփականատեր | Հողօգտագործման կորստի համար վերականգնման միանվագ նպաստ, որը հավասար է մեկ բերքի շուկայական արժեքին (ի լրումն բերքի փոխհատուցման), անհրաժեշտության դեպքում լրացուցիչ վերականգնման օգնություն՝ առկա եկամտը/կենսամիջոցների վերականգնումն ապահովելու նպատակով (կորոշվի ՏՊ-ում) |

| Կորստի տեսակը | Կիրառում Առանձնահատկություն | ԾԱԵԱ-ների սահմանումը | Փոխհատուցման իրավունքները |
|---|---|---|---|
| | | Մասնավոր ներդրողների հողն օգտագործող կամ զբաղեցնող ԾԱԵԱ-ներ | Վերականգնման միանվագ նպաստ, որը հավասար է մեկանգամյա բերքի շուկայական արժեքին (ի լրումն բերքի փոխհատուցման) հողօգտագործման կորստի համար. անհրաժեշտության դեպքում լրացուցիչ վերականգնողական օգնություն՝ գոյություն ունեցող եկամտի/կենսամիջոցների վերականգնմանը հասնելու համար (կորոշվի ՏՊ-ում): |
| **Շենքեր եւ շինություններ** | | | |
| Բնակելի և ոչ բնակելի շենքեր և շինություններ | ԾԱԵԱ-ներ, ովքեր կորցնում են բնակելի տունը, ունեցվածքը և/կամ շենքին/կառույցի հետ կապված եկամուտները | Բոլոր ԾԱԵԱ-ները՝ անկախ օրինական սեփականության իրավունքից (օրինական և օրինականացման ենթակա սեփականատերեր, անօրինական սեփականատերեր) | Բոլոր ազդեցությունները կդիտարկվեն որպես ամբողջական ազդեցություններ՝ հաշվի չառնելով իրական ազդեցության տոկոսը: Գույքի և այլ ակտիվների վրա ազդեցությունները կփոխհատուցվեն դրամական միջոցներով՝ ամբողջական փոխարինման արժեքով, առանց մաշվածության կամ գործարքի արժեքի: |
| | | ԾԱԵԱ-ները, որոնք զբաղեցնում կամ օգտագործում են մասնավոր ներդրողների սեփականությունը հանդիսացող հողերը | Փոխհատուցում ԾԱԵԱ-ներին պատկանող ցանկացած ակտիվի և կառուցված շինությունների դիմաց ամբողջական փոխարինման արժեքով:<br>Ինքնուրույն տեղափոխություն միանվագ նպաստ կանխիկ դրամով, որը հավասար է 12 ամսվա՝ 5 հոգուց բաղկացած ընտանիքի նվազագույն կենսապահովման եկամուտին, ինչպես սահմանված է ազգային օրենսդրությամբ: Կենսամիջոցների ամբողջական վերականգնումն ապահովելու համար նախատեսված միջոցառումներ՝ ըստ անհատական պլանի: Այս փոխհատուցման ծախսերը կփակվեն մասնավոր ներդրողի կողմից: |
| **Համայնքային ենթակառուցվածքի / ընդհանուր սեփականության ռեսուրսների կորուստ** | | | |
| Ընդհանուր սեփականության ռեսուրսների կորուստ | Համայնքային/ հանրային ակտիվներ | Համայնքային/ պետական | Համայնքի հետ խորհրդակցելով կորցրած կառույցի վերակառուցում և դրա հիմնական գործառույթների վերականգնում: |
| **Եկամտի եւ կենսամիջոցների կորուստ** | | | |
| Բերք | Ազդակիր փաստացի բերքի կամ ակնկալվող | Բոլոր ԾԱԵԱ-ներն անկախ | Բերքի փոխհատուցումը դրամով՝ փաստացի կամ ակնկալվող բերքի համախառն շուկայական արժեքով: |

| Կորստի տեսակը | Կիրառում Առանձնահատկություն | ԾԱԵԱ-ների սահմանումը | Փոխհատուցման իրավունքները |
|---|---|---|---|
| | բերքի եկամուտների կորուստ | օրինական կարգավիճակից | Փոխհատուցումը կտրամադրվի անկախ սպասվող բերքահավաքի ժամանակից: |
| Ծառեր | Ազդակիր ծառեր | Բոլոր ԾԱԵԱ-ներն անկախ օրինական կարգավիճակից | Դրամական փոխհատուցում համախառն շուկայական արժեքով՝ ելնելով ծառերի տեսակից, տարիքից և արտադրողական արժեքից: |
| Բիզնես/ զբաղվածություն | Բիզնեսի կորուստ կամ աշխատանքի կորուստ | Բոլոր ԾԱԵԱ-ներն անկախ օրինական կարգավիճակից | Սեփականատեր<br>(i) մշտական ազդեցություն. 1 տարվա վարձավճարի դրամական փոխհատուցում.<br>(ii) ժամանակավոր ազդեցություն. վարձակալության վճարի դրամական փոխհատուցում բիզնեսի ընդհատման ամիսների համար: Գնահատումը պետք է հիմնված լինի հարկային հայտարարագրի վրա կամ դրա բացակայության դեպքում հինգ հոգանոց տնային տնտեսության նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի վրա (համապատասխան ճշգրտումներ կարվեն ավելի մեծ տնային տնտեսությունների դեպքում):<br>Մշտական աշխատողներ<br>փոխհատուցում կորցրած աշխատավարձի համար, որը հավասար է 3 ամսվա կանոնավոր աշխատավարձին կամ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքին հինգ հոգանոց տնային տնտեսության համար (համապատասխան ճշգրտումներ կարվեն ավելի մեծ տնային տնտեսությունների համար):<br>Ե՛վ ձեռնարկատերերի, և՛ աշխատողների համար Միջոցառումներ են նախատեսվում ապահովելու կենսամիջոցների ամբողջական վերականգնումը: |
| Հանրային վայրեր մուտքի սահմանափակում | Պաշտոնապես սահմանազատված այգիների և պահպանվող տարածքների մուտքի հարկադիր սահմանափակումները բացասական ազդեցություն են ունենում ԾԱԵԱ-ների | Բոլոր ԾԱԵԱ-ներն անկախ օրինական կարգավիճակից | *Միջոցներ՝ աջակցելու ԾԱԵԱ-ներին անհատական ծրագրերով համապատասխան կենսապահովման միջոցները վերականգնելու ջանքերում:<br>ՋԿ-ն և կապպալառուները կհամագործակցեն ԾԱԵԱ-ների հետ՝ պոտենցիալ վեճերը լուծելու համար: |

| Կորստի տեսակը | Կիրառում Առանձնահատկություն | ԾԱԵԱ-ների սահմանումը | Փոխհատուցման իրավունքները |
|---|---|---|---|
| | կենսամիջոցների վրա | | |
| **Աջակցություն** | | | |
| Ուժեղ ազդեցություններ | >10% եկամտի կորուստ<br>Կամ արտադրողական հողի >10%-ի կորուստ | Ուժեղ ազդեցության ենթակա անձինք, ներառյալ անօրինական վերաբնակիչները և բիզնեսի սեփականատերերը, ովքեր կորցնում են իրենց եկամտի ավելի քան 10%-ը՝ Ծրագրի գործունեության արդյունքում | Գյուղատնտեսական եկամուտ. 2 հավելյալ բերքի փոխհատուցում, որը հավասար կլինի յուրաքանչյուր ազդակիր հողերի 1 տարվա բերքատվության արժեքին:<br>Այլ եկամուտներ. 1 հավելյալ փոխհատուցում 5 հոգանոց տնային տնտեսության համար 3 ամսվա նվազագույն կենսապահովման եկամտի համար: |
| Վերաբնակեցում/տեղափոխություն | Տրանսպորտային/ փոխադրման ծախսեր | Բոլոր ԾԱԵԱ-ները, ովքեր պետք է բնակության կամ բիզնեսի/տնտեսական գործունեության վայրից տեղափոխվեն | Տրանսպորտային ծախսերը ծածկող նպաստի տրամադրում,<br>եթե ԾԱԵԱ-ն լքել է բնակելի տունը, սակայն որոշակի ժամանակահատվածում օբյեկտիվ պատճառներով չի կարող տեղափոխվել նոր բնակելի տուն, նա կստանա համապատասխան վարձակալության նպաստ: |
| Խոցելի անձանց նպաստներ<br>(Աղքատության շեմից ցածր ԾԱԵԱ, միկրոմանի ծնողազուրկ տնային տնտեսություններ, հաշմանդամներ, միայնակ ապրող տարեցներ) | Բացահայտվում է ԾԱԵԱ-ների մարդահամարի ընթացքում | Աղքատության շեմից ցածր ԾԱԵԱ, միկրոմանի ծնողազուրկ տնային տնտեսություններ, հաշմանդամներ, միայնակ ապրող տարեցներ | Հինգ հոգանոց ընտանիքի համար նվազագույն սպառողական զամբյուղի արժեքին համարժեք 3 ամսվա նպաստ: Սա լրացուցիչ նպաստ է այս մատրիցով ներկայացված բոլոր մյուս իրավունքներին: |
| Ժամանակավոր ազդեցություն | | Բոլոր ԾԱԵԱ-ներն անկախ օրինական կարգավիճակից | Պատշաճ փոխհատուցումը կգնահատվի և կվճարվի սույն ՏՇ համաձայն շինարարության ընթացքում կամ դրանից առաջ, եթե նախապես բացահայտվել է: |

| Կորստի տեսակը | Կիրառում Առանձնահատկություն | ԾԱԵԱ-ների սահմանումը | Փոխհատուցման իրավունքները |
|---|---|---|---|
| շինարարության ընթացքում | | | |
| Տարաբնակեցման չկանխատեսված ազդեցություններ | | Աղքատության շեմից ցածր ԾԱԵԱ, միկրոմանի ծնողազուրկ տնային տնտեսություններ, հաշմանդամներ, միայնակ ապրող տարեցներ[12] | *ՀՏՁՀ-ն և շինարարության կապալառուն հաշվի են առնելու և մեղմացնելու/փոխհատուցելու են ծրագրի ընթացքում չկանխատեսված տարաբնակեցման ազդեցությունները |

[12] Կին գլխավորով տնային տնտեսություններ, որտեղ չկան աշխատունակ տարիքի անդամներ (սա չի ներառում ՀՀ զինված ուժերում պարտադիր ծառայություն անցնող, 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող կամ մինչև 23 տարեկան առկա ուսուցմամբ սովորող ուսանող); Տնային տնտեսություններ, որոնք գլխավորում են կենսաթոշակային տարիքի անձինք (տարեցներ) (սա չի ներառում ՀՀ զինված ուժերում պարտադիր ծառայություն անցնող, 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող կամ մինչև 23 տարեկան առկա ուսուցմամբ սովորող ուսանող); ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ընտանեկան նպաստների համակարգում հաշվառված և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան նպաստ ստացող անապահով տնային տնտեսություններ, տարհանված ընտանիքներ, որտեղ ընտանիքի բոլոր չափահաս անդամներն ունեն փախստականի կարգավիճակ:

# Հավելված 2: ՏՊ բովանդակությունը

Առաջարկվող բովանդակությունը պետք է ընդգրկի՝

ա. Ծրագրի նկարագրությունը (համապատասխան քարտեզներով և նկարազարդումներով), ներառյալ Ծրագրի օգտագործման համար որոշակի տեղամասերի ձեռքբերման անհրաժեշտության բացատրությունը և ձեռնարկված ջանքերը՝ խուսափելու կամ նվազագույնի հասցնելու հողի օտարման կամ անհրաժեշտ համարվող այլ հնարավոր ազդեցությունները:

բ. Տեղահանվածների մարդահամարի և ազդեցության ենթակա հողերի և գույքի գույքագրման և գնահատման արդյունքները, Ծրագրի ազդեցությանը ենթակա տնային տնտեսությունների (ԾԱԵՏՏ) մարդահամարի հետազոտությունը և գույքագրումը կարող է իրականացվել ԾԻԹ-ի սոցիալական մասնագետի կողմից, եթե տարաբնակեցման ազդեցության շրջանակը փոքր է: Այնուամենայնիվ, եթե ակնկալվում են մեծածավալ ազդեցություններ, կարող է պայմանագիր կնքվել Տարաբնակեցման խորհրդատուի հետ՝ ՏՊ մշակելու և իրականացնելու համար: Հարցումը կանցկացվի առանձին հարցազրույցներով՝ բոլոր ԾԱԵԱ-ների հետ: Այն թույլ կտա գնահատել նրանց խոցելիությունը և կնախատեսի օգնություն՝ համաձայն Հավելված 1-ում ներկայացված Իրավունքների մատրիցի: ԾԱԵԱ-ների անձնական տվյալները չպետք է հրապարակվեն:

գ. Ծրագրի հետ կապված ցանկացած սահմանափակումների նկարագրությունը ռեսուրսների օգտագործման կամ հողօգտագործման վերաբերյալ, որտեղ կիրառելի է:

դ. Հողերի/ակտիվների ծանրաբեռնվածության նկարագրությունը, ներառյալ կոլեկտիվ, համայնքային կամ սովորական օգտագործման կամ սեփականության պահանջները:

ե. Հողերի ձեռքբերմանը, տեղահանված անձանց փոխհատուցման և այլ օգնության հետ կապված համապատասխան օրենքների և կանոնակարգերի վերանայում և բացը լրացնող միջոցառումների սահմանում, որոնք անհրաժեշտ են ԲՍՍ5-ի պահանջներին հասնելու համար:

զ. Հողի և ակտիվների գնահատման ընթացակարգերի և փոխհատուցման ստանդարտների նկարագրությունը ազդեցության ենթակա ակտիվների բոլոր կատեգորիաների համար: Ազդեցության ենթակա հողերի և ակտիվների գնահատումը կարող է իրականացվել միայն լիցենզավորված գնահատողի կողմից, որը կարող է առանձին վարձվել ԾԻԹ-ի կողմից, եթե ՏՊ-ն պետք է մշակվի ԾԻԹ կողմից: Ազդեցության ենթակա հողերի և գույքի գնահատումն իրականացվում է «Գնահատման գործունեության մասին» օրենքի համաձայն, որը սահմանում է Հայաստանում անշարժ գույքի գնահատման գործունեության հիմունքները:

է. Փոխհատուցման և աջակցության բոլոր այլ ձևերի իրավասության չափանիշները, ներառյալ իրավասության վերջնաժամկետը:

ը. ՏՊ-ի իրականացման կազմակերպական կանոնակարգումներ և պարտականություններ:

թ. Իրականացման ժամանակացույցը:

ժ. Հաշվարկված բյուջե և անկանխատեսելի ֆինանսական ծախսեր:

ի. Խորհրդատվություն և հանրայնացման միջոցառումներ:

լ. Հատուկ ուշադրություն պետք է դարձնել խոցելի խմբերի, այդ թվում՝ էթնիկ փոքրամասնությունների, կանանց, միգրանտների/փախստականների, շատ երիտասարդների և շատ տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին: Խոցելի խմբերի

կենսապայմանները հատկապես զգայուն են սոցիալ-տնտեսական համատեքստի փոփոխությունների նկատմամբ և կախված են հիմնական ծառայությունների հասանելիությունից:

խ. Բողոքների մեխանիզմի նկարագրությունը

ծ. Իրականացման առաջընթացի մշտադիտարկման միջոցառումներ:

կ. ՏՊ-ն պետք է լրացվի յուրաքանչյուր տեղահանված ընտանիքի կամ անձանց համար անհատական փոխհատուցման փաստաթղթերի առանձին փաթեթով: Այս ֆայլերը պետք է գաղտնի վարվեն փոխառուի կողմից՝ տեղահանված անձանց որևէ վնաս չպատճառելու համար: Փոխհատուցման և աջակցության բոլոր այլ ձևերի իրավասության չափանիշները պետք է հստակորեն ամփոփվեն աղյուսակում, որը կարող է օգտագործվել տեղահանված անձանց հետ խորհրդակցելու համար (տե՛ս «Իրավունքների մատրիցը» ներկայացված Հավելված 1-ում):

հ. Լրացուցիչ պլանավորման միջոցառումներ պետք է ներառվեն ՏՊ-ներում ֆիզիկական տարհանում կամ զգալի տնտեսական տեղաշարժ առաջացնող նախագծերի համար: :

# Հավելված 3. Բողոքների լուծման հանձնաժողով. առաջադրանքներ և կազմ

ԲԼՀ-ն կներառի.

- Ջրային կոմիտեի ներկայացուցիչ,

- ԾԻԹ-ի տնօրենի տեղակալ

- Տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչ,

- Համապատասխան մարզպետարանի ներկայացուցիչ:

ԲԼՀ կազմը կներկայացվի ՀԲ թիմին մինչև ՏՊ նախապատրաստումը: ՋԿ-ի կողմից կգլխավորվի և կհրավիրվի ԲԼՀ նիստ լուծելու առանձնապես բարդ դեպքերը, որոնք վերաբերում են տարաբնակեցման հետ կապված բողոքներին և գանգատներին:

ԲԼՀ-ի հիմնական պարտականություններն ու գործառույթները հետևյալն են.

- Անցկացնել հանդիպումներ ըստ անհրաժեշտության,
- Ապահովել, որ բողոքների լուծումը համապատասխանի ԲՄ ընթացակարգին,
- Ապահովել, որ բողոքներին ի պատասխան հետագա գործողություններն իրականացվեն համաձայնեցված ժամկետներում,
- Պահպանել բոլոր գրանցված բողոքների տվյալների բազան՝ բարձրացված խնդիրների բնույթի, գործի պատմության և ձեռնարկված գործողությունների վերաբերյալ մանրամասների հետ միասին,
- Հանձնաժողովի անդամներին զեկուցել չլուծված/լուծված բողոքների մասին,
- Համագործակցել պատասխանատու պետական/տեղական կամ այլ մարմինների հետ՝ բողոքները լուծելու համար,
- Ապահովել ԲՄ տեղեկատվության հասանելիությունը ծրագրի տարածքում,
- Համագործակցել համայնքի ներկայացուցիչների հետ ԲՄ-ի արդյունավետության և օգտակարության վերաբերյալ, և անհրաժեշտության դեպքում, առաջարկել փոփոխություններ,
- Կատարել այցելություններ՝ անհրաժեշտության դեպքում, գնահատելու բողոքներ ներկայացրած անձանց կողմից բարձրացված խնդիրները:

# Հավելված 4. Հանրային քննարկման արձանագրություն

## Արձանագրություն

## Ջրային և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագրի բնապահպանական և սոցիալական (ԲՍ) գործիքների վերաբերյալ հանրային քննարկման

**Ամսաթիվ:** 15.04.2025

**Ժամ:** 14:00, Երևան

**Վայր:** ՀՀ տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե, Երևան, Վարդանանց 13ա

**Մասնակիցներ:** Ջրային կոմիտեի նախագահի տեղակալներ պարոն Մարտիրոս Նալբանդյան և պարոն Դավիթ Մկրտչյան, պետական գերատեսչությունների՝ նախարարություններ, տեսչական մարմններ, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի, թիրախային մարզպետարանների, «Ջրառ» ՓԲԸ-ի, Ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ, ջրօգտագործողների ընկերությունների, «Օրհուս» կենտրոնի ներկայացուցիչներ: Մասնակիցների ընդհանուր թիվը 30 մարդ (12 կին և 18 տղամարդ):

**Օրակարգ:**

1. Ողջույնի և բացման խոսք
2. ԲՍ գործիքների ներկայացում
3. Հարց ու պատասխան, քննարկումներ, շահակիրների հետադարձ արձագանք
4. Հաջորդ քայլեր և փակման խոսք

**Նպատակ:** Ջրային և ոռոգման ծառայությունների բարելավման (ՋՈԾԲ) ծրագրի շրջանակներում պատրաստված ԲՍ գործիքների հանրայնացում և քննարկում՝

- Բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլան (ԲՍՀՊ)
- Շահակիրների ներգրավման պլան (ՇՆՊ)
- Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակ (ԲՍԿՇ)
- Տարաբնակեցման շրջանակ (ՏՇ)
- Աշխատանքի կառավարման ընթացակարգեր (ԱԿԸ):

**1. Ողջույնի և բացման խոսք**

Ջրային կոմիտեի նախագահի պաշտոնակատար պարոն Մարտիրոս Նալբանդանը բացեց հանրային քննարկումը և ողջունեց մասնակիցներին: Նա նշեց, որ նախագիծը նպատակ ունի բարելավել ջրային ոլորտի ինստիտուցիոնալ վիճակը, արդիականացնել ոռոգման համակարգերը, ինչպես նաև բարելավել գյուղական վայրերում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունները:

**2. ԲՍ գործիքների ներկայացում**

Ջրային կոմիտեի սոցիալական հարցերի խորհրդատու տիկին Մարինե Վարդանյանը և Ջրային կոմիտեի բնապահպանության խորհրդատու տիկին Քրիստինե Սահակյանը ներկայացրեցին ԲՍ գործիքներն, այդ թվում՝ վարկային համաձայնագրի մաս կազմող

Բնապահպանական և սոցիալական հանձնառության պլանը (ԲՍՀՊ), ԲՍԿՇ-ն, ՏՇ-ն և ԱԿԸ-ն: Ներկայացումները վերաբերում էին հիմնական ԲՍ ռիսկերին, առաջարկվող մեղմացման միջոցառումներին, շահակիրների նույնականացմանը, ներգրավման գործողություններին և մեթոդներին, տարաբնակեցման ռիսկերին և ազդեցությանը, տուժած անձանց իրավունքներին և իրավասություններին, ինչպես նաև աշխատանքի անվտանգության և առողջության (ԱԱԱ) ռիսկերին, ինչպես նաև ռիսկերը վերացնելու կամ նվազագույնի հասցնելու առաջարկվող միջոցառումներին, մրցութային փաթեթներում ԲՍ գործիքների ինտեգրմանը, նախագծի գործունեության և աշխատանքների վերահսկողությանն ու մշտադիտարկմանը՝ համաձայն Համաշխարհային բանկի (ՀԲ) ԲՍ ստանդարտների (ԲՍՍ) և ազգային օրենքների:

**3. Շահակիրների արձագանք ու քննարկում**

Շահակիրներին առաջարկվեց կիսվել իրենց կարծիքով, մտահոգություններով և առաջարկություններով: Բարձրացվեցին հետևյալ հիմնական հարցերը.

**Հարցեր և պատասխաններ**

| | | |
|---|---|---|
| 1 | Կոյուղաջրերը թափվում են ջրային ավազաններ, ինչը խաթարում է էկոհամակարգերը: Օրինակ՝ Արմավիրի մարզում խմելու ջրի մատակարարումն իրականացվում է խորը հորերից, ինչը ազդում է ստորգետնյա ջրերի մակարդակի վրա և կարող է հանգեցնել լուրջ խնդիրների: Արդյո՞ք հնարավոր է նման խնդիրների լուծումը այս նախագծի շրջանակներում (Էջմիածնի ՋՕԸ): | Ծրագրի ՋՋ (ջրամատակարարում և ջրահեռացում) բաղադրիչի շրջանակներում Արմավիրի մարզը նույնպես դիտարկվել է, սակայն կոնկրետ տարածքների և համակարգերի վերջնական ընտրությունը դեռևս քննարկման փուլում է: Բարձրացված հարցերը կարևոր են, սակայն դրանք հետագայում կհստակեցվեն: |
| 2 | Շատ կարևոր է, թե ինչպես են կարգավորվելու ծրագրի կառավարման ընթացակարգային հարցերը, արդյոք նախատեսվում է ունենալ ոռոգման ընդհանուր պլան՝ ամբողջ երկրի մակարդակով, ինչը բավականին լայնածավալ և ներդրումատար գործընթաց է: Կան մի շարք ոլորտային խնդիրներ՝ կապված երկրորդային և երրորդային ոռոգման ցանցերի տեխնիկական վիճակի բարելավման հետ: Արդյոք նախատեսվո՞ւմ են առանձին հանդիպումներ և քննարկումներ յուրաքանչյուր ոլորտի համար, որպեսզի շահագրգիռ կողմերը հնարավորություն ունենան բարձրաձայնելու տեխնիկական | Նման հանդիպումները, անշուշտ, կկազմակերպվեն, որոնց ընթացքում հնարավորություն կլինի անցկացնել արդյունավետ քննարկումներ և փոխանակվել կարծիքներով: |

| | | |
|---|---|---|
| | խնդիրները և ներկայացնելու առաջարկություններ («Ջրառ» ՓԲԸ)։ | |
| 3 | Արդյոք նախատեսվո՞ւմ է լրացուցիչ ջրամբարների կառուցում։ Եթե այո, ապա հնարավո՞ր է դրանք դիտարկել ներկայումս ընթացող՝ ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ջրամբարաշինության ծրագրի հետ համատեղ (ՇՄԱՓԿ ՊՈԱԿ)։ | Ծրագրի 3-րդ բաղադրիչը վերաբերում է մայր ջրանցքներին, ինչպես նաև երկրորդային և երրորդային ոռոգման ցանցերին, և այդ պատճառով չի նախատեսում խոշոր ջրամբարների կառուցում։ Ծրագրով նախատեսվում է օրական կարգավորող ջրամբարների կառուցում, որոնք փոքր ավազաններ են և չեն կարող ունենալ լայնածավալ ազդեցություն։ |
| 4 | Արդյոք հայտնի՞ է, թե քանի ենթածրագիր պետք է ՇՄԱԳ փորձաքննություն անցնի (Օրհուս կենտրոն) | Ծրագրի շրջանակներում նախատեսվող գործունեությունները հիմնականում կլինեն «Բ» կատեգորիայի՝ համաձայն ՀՀ օրենսդրության։ «Ա» կատեգորիայի ազդեցություն ունեցող ծրագրեր չեն նախատեսվում, սակայն հնարավոր են նաև այնպիսի գործունեություններ, որոնք ՇՄԱԳ-ի ենթակա չեն։ Ներկայումս անհնար է ասել, թե քանի ենթածրագիր կպահանջի ՇՄԱԳ-ի իրականացում, քանի որ դա կախված է յուրաքանչյուր բաղադրիչի և ենթաբաղադրիչի շրջանակներում նախատեսվող գործունեությունների բնութագրից և մանրամասներից։<br><br>Բոլոր ենթածրագրերի համար կպատրաստվեն տեղանքին բնորոշ ԲՍԿՊ-ներ՝ Համաշխարհային բանկի ԲՍՍ պահանջներին համապատասխան, որոնք կհրապարակվեն, և ազդակիր համայնքներում կկազմակերպվեն հանրային քննարկումներ։ |
| 5 | Ինչպե՞ս է կազմակերպվելու և իրականացվելու շահագրգիռ կողմերի ներգրավման գործընթացը մարզերում, մասնավորապես՝ հանրային հատվածի և բնակիչների մասնակցությունը (Օրհուսի կենտրոն)։ | Թիրախային բոլոր մարզերում կկազմակերպվեն հանրային քննարկումներ՝ բոլոր բացահայտված շահագրգիռ կողմերի, ներառյալ հանրային և մասնավոր հատվածների ներկայացուցիչների մասնակցությամբ։ |
| 6 | Ինչպե՞ս է իրականացվելու ամբողջ ծրագրի մշտադիտարկումը (Օրհուսի կենտրոն)։ | Ամբողջ ծրագրի մշտադիտարկումը կներառի բոլոր ասպեկտները՝ տեխնիկական, շրջակա միջավայրի, սոցիալական և այլն։ Հատկապես դա ապահովվելու է տեխնիկական և հեղինակային վերահսկողության |

| | | |
|---|---|---|
| | | շրջանակում՝ պարբերական զեկույցների պատրաստման և Ծրագրի իրականացման թիմին և Համաշխարհային բանկին ներկայացման միջոցով: Մշտադիտարկման այցեր կիրականացվեն ԾԻԹ-ի համապատասխան մասնագետների կողմից: Վերահսկող մարմինները նույնպես կարևոր դեր կխաղան այս գործընթացում, հատկապես՝ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմինը: Բացի այդ, մշտադիտարկման այցեր կիրականացնի նաև Համաշխարհային բանկի թիմն ծրագրի իրականացման ընթացքում: Մշտադիտարկման բոլոր մակարդակներում ներկայացվող հաշվետվությունները կպարունակեն փաստագրված տեղեկություններ՝ համապատասխան աջակից փաստաթղթերով, լուսանկարներով և այլն: |
| 7 | Արդյոք Ծրագիրը ներառու՞մ է անասունների ջրարբիացման համակարգերի կառուցում (Էջմիածին ՋՕԸ): | Ոչ, անասունների ջրարբիացման համակարգերի կառուցում ներառված չէ Ծրագրում: |
| 8 | Ինչպե՞ս կապահովվի շահակիրների մասնակցությունը հանրային քննարկմանը (Էջմիածին ՋՕԸ) | Հանրային լսումները պարտադիր են ՀՀ օրենսդրության համաձայն՝ ՇՄԱԳ/ՌԵԳ գործընթացների դեպքում: Օրենսդրությամբ սահմանված ընթացակարգին համապատասխան նախատեսվում են երկու հանրային լսումներ: Նշված է, որ տեղական ինքնակառավարման մարմինները կարևոր դեր ունեն այս գործընթացում, քանի որ հենց նրանք են պատասխանատու առաջին հանրային լսումը կազմակերպելու համար, այնուհետև, համայնքի խորհուրդը նախնական համաձայնություն է տալիս նախատեսվող գործունեության իրականացման վերաբերյալ: Այն նախագծերի համար, որոնք չեն պահանջում ՇՄԱԳ և փորձաքննություն, նույնպես |

| | | |
|---|---|---|
| | | կկազմակերպվեն տեղամասային ԲՄԿՊ-ների քննարկումներ։ |
| 9 | Արդյոք տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներն ունե՞ն բավարար հմտություններ կամ կարողություններ ծրագրի ներկայացման և հարցերին պատասխանելու համար (Էջմիածնի ՋՕԸ)։ | Տեղական ինքնակառավարման մարմինները պատասխանատու են հանրային լսումների կազմակերպման համար՝ ներգրավելով նաև համայնքի բնակիչներին և այլ շահագրգիռ կողմերին։ Ծրագրի ներկայացումը և հարցերին պատասխանելը ԾԻԹ-ի գործառույթն է։ |
| 10 | Ով է առաջարկելու համայնքի ներկայացուցիչներին հանրային լսմանը մասնակցելու համար (Օրհուսի կենտրոն)։ | Շահակիրները մարզային և համայնքային մակարդակներում նույնականացվել են ՇՆ գործընթացներով և պատշաճ կերպով կհրավիրվեն մասնակցելու հանդիպումներին։ Բացի այդ, ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր թիրախային մարզում կընտրվեն համայնքների հետ կապի պատասխանատուներ, ովքեր կաջակցեն ծրագրին՝ կազմակերպելով տարբեր մակարդակների հանդիպումներ մարզային և համայնքային մակարդակներում, այդ թվում՝ խոցելի խմբերի հայտնաբերման և արդյունավետ քննարկումների ապահովման համար։ |
| 11 | Հնարավո՞ր է իրականացնել նոր ենթակառուցվածքների երկարաժամկետ մշտադիտարկում Ծրագրի ավարտից հետո՝ շահագործման փուլում (Արմավիրի մարզպետարան)։ | ԾԻԹ-ը վարկային միջոցներով երկարաժամկետ մշտադիտարկում չի կարող իրականացնել։ Այս նպատակով պետությունն ունի վերահսկող մարմիններ՝ իրենց համապատասխան գործառույթներով։ |

**Առաջարկություններ**

| | |
|---|---|
| 1 | ԾԻԹ-ի ավելի սերտ համագործակցություն մարզային իշխանությունների հետ մինչ նախագծման փուլը (Արմավիրի մարզպետարան)։ |
| 2 | Լավ կլինի Աշխատանքի անվտանգության և առողջության մասնագետին ԾԻԹ-ում ներգրավել նախագծման փուլից առաջ (ԱԱՏՄ)։ |
| 3 | Շինարարության պայմանագրերում պետք է ներառվի կետ, որը նախատեսում է աշխատակիցների հետ աշխատանքի պայմանագրերի ստորագրումը՝ ծառայության մատուցման պայմանագրերի փոխարեն. սա կապահովի բոլոր աշխատավարձային և սոցիալական առավելությունները աշխատողների համար (ԱԱՏՄ)։ |
| 4 | Տարածքի սեփականության իրավունքի վավերացում իրականացնել համայնքներում, քանի որ Կադաստրային քարտեզները երբեմն անճշգրիտ են (Լոռի մարզպետարան)։ |

| | |
|---|---|
| 5 | Անհրաժեշտություն կա առանձին հանդիպումներ և քննարկումներ կազմակերպելու յուրաքանչյուր ոլորտի համար, որպեսզի շահագրգիռ կողմերը հնարավորություն ունենան՝<br>○ հասկանալու, թե ինչպես են կարգավորվելու ծրագրի կառավարման ընթացակարգային հարցերը, արդյոք նախատեսվում է ունենալ ընդհանուր ոռոգման պլան ամբողջ երկրի մակարդակով, ինչը բավականին լայնածավալ և ներդրումատար գործընթաց է,<br>○ բարձրաձայնելու տեխնիկական խնդիրները և ներկայացնելու առաջարկություններ (Զրառ): |

**4. Հետագա քայլեր և փակման խոսք**

- Շահագրգիռ կողմերը տեղեկացան, որ նրանց մեկնաբանությունները կքննարկվեն և անհրաժեշտության դեպքում կինտեգրվեն վերջնական ԲՆՍ փաստաթղթերում:
- Փոփոխված փաստաթղթերը կհանրայնացվեն՝ շահագրգիռ կողմերից հետագա կարծիքներ և առաջարկություններ ստանալու նպատակով:
- Քննարկման գործընթացը կշարունակվի՝ մարզերում Ծրագրի մեկնարկային հանդիպումների, համայնքներում հանրային քննարկումների, ազդակիր բնակավայրերում քննարկումների և խոցելի խմբերի հետ արդյունավետ խորհրդատվությունների միջոցով:

Հանդիպումը եզրափակվեց տիկին Սահակյանի և տիկին Վարդանյանի փակման խոսքերով, ովքեր շնորհակալություն հայտնեցին բոլոր մասնակցիների արդյունավետ ներդրման համար և հաստատեցին շրջակա միջավայրին և սոցիալական խնդիրներին ուշադրություն դարձնելու իրենց հանձնառությունը:

**Մասնակից գերատեսչությունների / ընկերությունների ցանկը**

Զրային կոմիտե

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Ֆինանսների նախարարություն

Էկոնոմիկայի նախարարություն

Շրջակա միջավայրի նախարարություն

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն ՊՈԱԿ

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին

Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

Արագածոտնի մարզպետարան

Արմավիրի մարզպետարան

Կոտայքի մարզպետարան

Լոռու մարզպետարան

«Զրառ» ՓԲԸ

Ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ

«Օրհուս» կենտրոն

Երևան ՋՕԸ

Արագածոտն ՋՕԸ

Էջմիածին ՋՕԸ

Տավուշ ՋՕԸ

Լոռի ՋՕԸ

Կոտայք ՋՕԸ

**Մասնակիցների ցանկ**

*(Ենթակա չէ հանրայնացման)*

**Լուսանկարներ**

*(Ենթակա չեն հանրայնացման)*